

27547

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԽՑ ՖԻՆՃԱՌԱԿՈՄԱՏԻ

336.2

3-34

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐ
ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄ. Գ. ԴԵՍԻՐՉՈՂԼՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929

2 APR 2013

15 JAN 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԽՆ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

336.2

7-34

4.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐ
ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՍԱՐ

ԿԱԶԱ. Գ ԳԵՄԻՐՉՈՂԼՅԱՆ



15214-57

ՅԵՐԵՎԱՆ

1929

ՀԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՒՆ

Հաճախ, հարկատուները, հարկային որենքները չիմանալու հետեանքով իրենց վրա դրված հարկային պարտականությունները կամ բոլորովին չեն կատարում, կամ, յեթե կատարում են, այն անում են վոչ ժամանակին և վոչ այսպես, ինչպես հարկավորե, վորի համար հարկային հսկիչ մարմինների կորմից յենթարկվում են որինական բռնագանձման, այդպիսով կրելով իրենց համար դաշտացուցիչ և յերեմն ել միանգամայն վրդովեցուցիչ նյութական վնաս—վորովհետեւ որենիք չիմանալով վորելիցե խախտույթատարելը չի կարող արդարացի նանաչվել իշխանության կողմից:

Շատ անդամ հարկատուները, իրենց ամեն տեսակ միջնորդությունները—հարկային արտօնություններ ստանալու կամ բողոքները գանգատի ձևով—սխալ տուրքադրման համար ուղղում են վոչ համապատասխան հիմնարկություններին կամ վոչ դրա համար սահմանված ժամկետին, վորի հետեանքը լինում և այն, վոր աննպատակ ժամանակ են կորցնում կամ զրկվում են իրավունքից —կորցնելով իրավունքները վերականգնելու ժամանակամիջոցը, միաժամանակ ծանրաբեռնելով զրադրություններով ամենաբարձատեսակ մարմինները, այդպիսով հարկադրելով վերջիններս ևս ավելորդ ժամանակ և ուժ սուպառել, մինչդեռ դրանից կարելի յեր հեշտությամբ խուսափել—պահպանելով ճշտությամբ որենքով սահմանված բողոք տալու կարգը և հարկային արտօնություններ տալու միջնորդություններ հարուցել:

Բոլոր ասածներ հատուկ չափով ուետք և վերաբերվի քաղաքներում տեղական հարկերի և տուրքերի վճարողներին, զրովհետեւ այս հարկերի և տուրքերի զգալի բազմազանությունը չի թույլատրում բավականաչափ վերահսու լինել գոյություն ունեցող որենսդրությանը վոչ միայն իրենց տեղական հարկեր և տուրքեր վճարողներին, այլ միաժամանակ դժվարացնում են հենց հարկային աշխատանքների գործը:

Ներկայացնելով ընթերցողին սույն զբանակը, մնի այն հարկատու կամ հարկային աշխատակից, բավականաչափ կողներ

Mus. № 1858. ԳՐԱՌԵՊՈՎԼԻԿԱՐ 1720 (F)
ՏԻՐԱԺ-500
ՀԱՅԹՈՒԵԳՐԱՖԻ 1-ԻՆ ՏՊԱՐԱՆ

վերսէիցալ հարկերում տեղական հարկադրումը ըմբռնելու և
անպայման առանձնապես ոգտակար կարող ե լինել տեղական հար-
կեր ու տուրքեր վճարող լայն մասսաներին՝ տալով նրանց իրենց
հարկային պարտականությունների վերաբերմամբ ճիշտ պուդ-
ժունքներ։

Գիտակցելով այսպիսի գրքույկի ահազին անհրաժեշտությունը
—հարկային որենքները ժողովրդականացնելու նպատակով և
այդ ճանապարհով հարկային գիտցիպիլինան ամրապնդել հարկա-
վճար մասսաների մեջ—ձեռնարկվում ե սրա հրատարակությունը։

ՀԱՐԿԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. ՀԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Ամերկովկասի Ս. Ֆ. Խ. Հ. Կենտրոնակոմի և Ժողկոմխորհի
կողմից 1926 թ. ողոստոսի 9-ին հաստատված Տեղական ֆինանս-
ների Կանոնադրության համաձայն՝ տեղական խորհուրդներին
իրավունք և տրվում սահմանել ու դանձել տեղական հարկեր և
տուրքեր։

Բոլոր տեղական հարկերն ու տուրքերը բաժանվում են յերկու[—]
խմբի՝[—] ա) հարկեր, վորոնք գանձվում են վորպես տոկոսային
հավելումներ պետական հարկերի և տուրքերի վրա և բ) ինքնու-
րույն հարկեր ու տուրքեր։

Կանոնադրության համաձայն հավելումները տարածվում են
հետեւյալ հարկերի և տուրքերի վրա[—]

ա) խմբչների և ծխախոտեղենի վաճառքը թույլատրող
արտանազրերի (պատեհա) արժեքի[—]

բ) պետական յեկամտային հարկի[—]

գ) պետական վորսորդական տուրքի[—]

դ) դատական տուրքի և նոտարական մարմինների, ժողովա-
տարանների, գավառային և գավառակային գործկոմների ու
զյուղական գործիքների կողմից չենքերի վաճառքը կամ դնումը, նոր
չենքերի կառուցումը թույլատրելու և այլ տեսակի գործողու-
թյունների համար գանձվող վճարների վրա, վորոնց չափը նա-
խատեսված և համապատասխան սակագնով։

Նույն կանոնադրության 27-րդ հոդվածը նախատեսում է
հետեւյալ ինքնուրույն տեղական հարկերն ու տուրքերը[—]

ա) չենքերի հարկ[—]

բ) յերկաթուղով և ջրային հաղորդակցության ճանապարհով
արտածվող և ներմուծվող բեռների հարկ[—]

գ) բորսայում կատարվող գործառքների հարկ[—]

դ) արդյունաբերական այգիների և բանջարանոցների հարկ[—]

յի) անոտանյութերի տուրք[—]

զ) անասունների և դրանց հում նյութերի անասնաբուժա-
քնության տուրք:

Ե) բնակարանային հարկ և

Ը) ռենտա:

Բացի դրանից համաձայն Կանոնադրության 57-րդ հոդվածի
Հ. Ս. Խ. Հ. Կենտղործկոմի իր 1928 թ. դեկտեմբերի 19-ի նիստի
վորոշմամբ տեղական խորհուրդներին իրավունք և տվել սահմա-
նել ու գտնձել ես մի շարք տեղական հարկեր և տուրքեր, այն և —

1. Փոխադրական միջոցների հարկ:

2. Միանվագ տուրք:

3. Անասունների հարկ՝ քաղաքային վայրերում:

4. Հյուրանոցներում, ճաշարաններում և այլ նման ձեռնարկ-
ներում տրվող հաշիվներից հատուկ տուրք:

5. Հանգային զվարձալիքների հարկ:

6. Պլակատների, աֆիշաների, սեղամների և հայտարարու-
թյունների հարկ քաղաքային վայրերում:

7. Աճուրդով վաճառվող գույքի հարկ:

8. Յուցակագրման տուրք. քաղաքային վայրերում:

9. Հատուկ տուրք գյուղական կատարածու լինելու իրավունք
չունեցող անձանցից և

10. Տուրք բուժավայրերն յեկողներից:

2. Տեղական չերկերի Յեկ ՏՈՒՐՔԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.

Վերևում ցույց տրված տեղական հարկերից ու տուրքերից և
պետական հարկերի տոկոսային հավելումներից տեղական խոր-
հուրդները կարող են սահմանել միայն այնպիսիները, վորոնք նը-
պատակահարմար կհամարվեն խորհուրդների կողմից: Բացի դրա-
նեց, ինչպես տեղական ֆինանսների կանոնադրության, նույն-
պես և ՀՍԽՀ Կենտղործկոմի 1928 թ. դեկտեմբերի 19-ի վորոշ-
ման հսմածայն սահմանված են բարձրագույն կոստաներ, և տեղա-
կան խորհուրդներն ի նկատի ունենալով տեղական պայմանները
կարող են հիշվածների սահմաններում վորոշել հարկերի կամ տուր-
քերի կոստաները:

Տեղական հարկեր և տուրքեր կարող են սահմանել միայն
այն դեպքում, յերբ տեղական խորհուրդները համապատասխան
վորոշում ունեն կայացրած այդ տոթիվ:

Յեթե նախատեսվում է սահմանել որենքով չնախատեսված

թույլտարովում և միայն այն դեպքում, յերբ այդպիսին հաստատ-
վի համապատասխան որենսդրական կարգով: Նման դեպքերում
նոր հարկի կամ տուրքի սահմանումը նախատեսող տեղական մար-
թինները պետք է սահմանվող հարկի նախադիմն իր ամբողջ տվյալ-
ներով ուղարկեն Ֆինժողկամատ, վորը համապատասխան վերա-
մշակումից հետո, այդպիսին ներկայացնում է Կենտղործկոմի և
Ժողկոմինը հաստատման:

3. Տեղական չերկերի ԱՌԹԻՎ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐ-
ԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵԿ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐ-
ԿԵԼՈՒ ԿԱՐԳԻ

Անձիշտ հարկման կամ սխալ հարկի յենթարկելու համար բո-
ղոքներ ներկայացնելու կարգը, վոր նախատեսված է ՀՍԽՀ Կենտ-
ղործկոմի 1928 թ. հունվարի 5-ի վորոշումով, վերաբերում է
գլխավորակես ինքնուրույն տեղական հարկերին և տուրքերին: Ինչ
վերաբերում է պետական հարկերի հավելումներին, ասպա զա յեն-
թակա յե այն կարգին, վոր սահմանված է պետական հարկերի նը-
կամամթմ:

Հարկերի գեմ յեղած բողոքները տրվում են Գալֆինբաժնին
և կավառային հարկային հանձնաժողովին մեկ ամսվա ընթաց-
քում՝ հաշված հարկամբ սովորական կարգով:

Այն դեպքում, յերբ հարկատուն չի բավարարվում գավառա-
յին հարկային հանձնաժողովի վորոշումով, նա կարող է համապա-
տասխան գավիֆինբաժնի միջոցով նորից բողոք տալ Քաղխորհրդին
կամ Գործկոմին, սակայն վոչ ուշ, քան յերկու շաբաթվա ընթաց-
քում՝ հաշված գավառային հարկային հանձնաժողովի վորոշումը
հարկատուն հայտնելու որից: Հիշված բողոքների առթիվ Քաղ-
խորհրդի կամ Գործկոմի կայացրած վորոշումները համարվում են
վերջնական և կրկին բողոքարկման յենթակա չեն:

Սակայն կարող են պետահետ գեպքեր, յերբ քաղխորհուրդները
կամ գործկոմները ճշուոթյամբ չկիրառեն տեղական հարկման վե-
րաբերյալ որենքի պահանջները: Յեկ ահա նման դեպքերում հար-
կատուն իրավունք է արվում իր բողոքն ուղղել Ֆինժողկոմատին,
վորը դիմումը քննում է վերահսկողական կարգով:

Հարկատուն վորոշման մասին հայտնելու որից սկսած յեր-
կու շաբաթվա ընթացքում բողոքները ներկայացվում են Ֆինժող-
կոմատին, այն քաղխորհրդի կամ գործկոմի միջոցով, վորի վորո-

վորեւ տեղական հարկ կամ տուրք, ապա այդ հարկի դանձումը չումը բողոքարկում է, ըստ վորում վերջինս ներկայացված՝ բողոքը տվյալ դործին վերաբերող բոլոր նյութերի հետ միասին ուղղում և ֆինժողկոմատին և յեթե անհրաժեշտ ե գանում՝ կցույժ և նաև իր յեղակացությունը:

Ֆինժողկոմատի վորոշումներն արդեն վերջնական են և չեն կարող բողոքարկվել:

4. ՀԱՐԿԱՑՈՒՆԵՐԻՆ ԺԱՄԿԵՏ ՅԵՎ ՀԱՐԿԸ ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԸ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐԸ ԶԻՐԳԻՆԻ ԿԱՐԳԻ:

Լինում են դեպքեր, յերբ հարկատուն չի կարողանում սահմանված ժամկետին մուծել իրենից հասանելիք հարկը, և նա չի վճարում վոչ թե այն պատճառով, վոր խուսափում է հարկից կամ մոռացել է վճարման ժամկետը, այլ այն պատճառով, վոր նուալյալ ժամանակամիջոցում գանդում և նյութական դժվարին կացության մեջ: Նման դեպքերում, յերբ հարկատուն չի կարողանում ժամանակին կատարել իր հարկային պարտականությունները, նա պետք է համապատասխան դիմում ներկայացնի Փինբաժնին՝ միջնորդելով յերկարելու վճարման ժամկետը, կամ ժամանակ ապամաս-մաս վճարելու համար: Տրված դիմումի հետևանքով հարկատուի տնտեսական դրությունը մանրամասնորեն քննելուց հետո, անհրաժեշտության դեպքում նրան կտրվեն այդ արտօնությունները:

Հարկի բոլորովին զիջումը, վորպես բացառիկ միջոց, թույլատրվում է միայն այն դեպքում, յերբ կատարուցվի վոր հարկատուն կատարելավես վոչ մի հարավորություն չունի վճարելու հարկը՝ անգամ նրան ժամկետ առաջ հետո: Հարկը կամ տուրքը վիշելու հարգելի պատճառներ պետք են ընդունել զիմավորապես հարկատուին հասած տարրերային աղետները, այն ե՝ հրդեհ, կարկտահարություն, անբերություն, անասունները սատկելու դեպքեր և այլն:

Պետք է միանդամ ընդմիջության հիշել, վոր ժամկետ ստանալու, հարկը կամ տուրքը զիջելու համար ներկայացված միջնորդությունը չի կարող պատճառ հանդիսանալ դադարեցնելու գանձումը, և միջնորդության մերժման դեպքում, տուժը հաշվում է մուծման համար սահմանված ժամկետից:

Յեթե հարկատուն յերկարացված ժամկետին կամ մաս-մաս վճարելու համար տրված ժամանակին չի մուծում հարկը, ապա նույնիվ վորում է ստացած արտօնությունից և դանձվում է նրանից ամբողջ հետագայթը, վորի վրա ավելացվում է նաև տուժ՝ սկսած հարկի վճարման ժամկետը լրանալու որից:

5. ԱՎԵԼՈՐԴ ԿԱՄ ՍԽԱԼ ԳԱՆՉՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ

ՀԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ

Այն դեպքելում, յերբ հարկատուն կամովին կամ թե պաշտոնատար անձանց պահանջով տեղական հարկերի և տուրքերի դիմաց ժուծում և վորոշ գումար, իսկ հետո պարզվում է, վոր վճարելու համար պահանջը յեղել և սխալ և կամ հարկատուն վճարել և ավելի քան պետք եր, ապա նման դեպքերում հարկատուն պետք է միջնորդի գավիֆինբաժնի առաջ վերադարձնել այդ գումարը կամ վորանցել ի դիմաց իրենց հասանելիք ուրիշ հարկի: Հարկատուն պետք է միջնորդություն հարսուցե ժամանակին, վորովհետեւ վճարման որից մի տարի անցնելուց հետո՝ չի բավարարվի միջնորդությունը:

6. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԱՆՉՎԱԾ ԿԱՐԳՆ ՈՒ ՄԻՋԱՑՆԵՐԸ

Սահմանված ժամկետին չմուծված հարկաշափը փոխանցվում է հետագայթի, վորպիսին առաջին յերկու որվա ընթացքում դանձըվում և առանց տուժի, իսկ յերրորդ որվանից տուժը հաշվում և առաջին որից՝ յուրաքանչյուր որվա համար $\frac{1}{3}\%$: Յեթե հետագայթը չի վճարվում կամովին, ապա գանձման համար գործադրվում են ստիպողական միջոցներ, համաձայն պետական ու տեղական հարկերի և տուրքերի զանձման ընդհանուր կանոնների և հրահանգների:

Ստիպողական գանձման միջոցները հետեւալներն են:

ա) Վերգրավում և կալանգի տակ և առնվամբ հետնույթատիրոջ դույքը, բացառությամբ ներքոհիշյալ դույքերի: Հրապարակային աճուրդով վաճառվում և վերգրաված դույքը, և ստացված գումարից ծածկվում է հետնույթն ու աճուրդի կատարման հետ կապված ծախքը:

բ) Գանձումը տարածվում է այն գումարների վրա, վորոնք հարկատուին հասնում են յերրորդ անձից կամ իորհրդային հիմնարկությունից:

գ) Հրապարակային աճուրդով վաճառման են յենթարկվում հետույթատիրոջ պատկանող չենքերը:

Փողկոմիսորհի 1926թ. նոյեմբեր 5-ի վորոշմամբ սահմանված եայն գույքի ցուցակը, վորոնք յենթակա չեն վերգրման և աճուրդային վաճառքի:

Ցուցակում նշված են հետեւյալ իրերը.—

ա) Վերարկու, մեկական ձեռք ամառային և ձմեռային գրսի հաղուստ՝ ընտանիքի դիմավորի հետ միասին ազրող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար. բ) հազնելու և անկողնու համար յերեք զույգ սպիտակեղեն, գ) յերկու զույգ կոշիկ, դ) մեկական մահճակալ կամ թախտ, յե) մեկական աթոռ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար, զ) յերեք կաթսա, ե) յերկու սեղան, ը) մեկ պահարան, թ) յերկու կարստ կամ մեկ զորդ, ժ) մեկ կարսի մեքենա, յեթե մեքենան ծառայում է փորպես ապրուստի միջոց, ի) մեկ ամսվա համար կենսամթերք հետեւյալ հաշվով՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին մեկ օրվա համար,—փայտ 4 կիլո, ալյուր 800 գրամ, կամ հացահատիկ՝ 1 կիլոզրամ, կամ թե հազ՝ 1 կիլո, 200 գր., յուղ 50 գր. պահիր 100 գր. և կանաչեղեն 200 գր., լ) հետույթատիրոջ արհեստագործական զբաղմունքի, արհետի մանր կամ տնայնագործական զբաղմունքի արհետագործական զբաղմունքի, արհետի մանր կամ տնայնագործական զբաղմունքի համար անհրաժեշտ արտադրական գործիքները, յեթե դրանք ծառայում է աշխատանքի շահագործող չեն հանդիսանում, իս) տնտեսության պահպանման համար անհրաժեշտ դյուրանտնեսական և արհեստագործական դործիքներ, յերեք դրույի խոչոր անասուն՝ վեց ամսվա մննդի պահարի հետ միասին՝ հետեւյալ հաշվով՝ 12 կիլո դարձան, 4 կիլո խոտ, ծ) սերմացու՝ մեկ դեսատինի համար 192 կիլո ցորեն կամ 224 կիլոգր. գարի, կամ թե 1280 կ. կարտոֆիլ, կամ 80 կ. բամբակի սերմ, կամ 128 կիլո չալթուկ, կ) չհավաքված բերքը և հ) գյուղական տնտեսության անհրաժեշտ հանդիսացող չենքերը:

7. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿՄԱՆ ՅԵՆՔԱԿԱ ԶԵՆՔԱԿԱ ԶԵՆ.

Տեղական հարկերի ու տուրքերի յուրաքանչյուրի մասին առանձին խոսելու միջոցին մենք ցույց կտանք, թէ համաձայն տեղական ֆինանսների 1926թ. ոպսասոսի 9-ի կանոնագրության և ՀՍԽՀ կենագործկոմի ու ժողկոմիսորհի վորոշման, ինչպիսի որ յեկտներ են ազատվում հարկումից իսկ այսեղ մենք ցույց կտանք

միայն նրանք, վորոնք ընդհանրապես ազատվում են քոլոր տեսակի տեղական հարկումից : Ահա դրանք.—

ա) Խ. Ա. Հ. Միության կից արտասահմանյան պետությունների գիվանագիտական ներկայացուցիչները.

բ) Փոխադարձ հիմունքով հյուպատոսական ներկայացուցիչները.

գ) Ռազմածովային ժողկումատի և Բանվորագյուղացիական կարմիր բանակի Ռազմա-Սանիտարական վարչության հիմնարկություններին, ձեռնարկություններին, հաստատություններին պատկանող շտաբով և տարեկով նախատեսված գույքերը:

դ) Կարմիր Խաչի և Կարմիր կիսալուսնի ընկերությունների հիմնարկությունները, վորոնք կենսադործում են անմիջականորեն հիշված ընկերությունների վրա զրված խնդիրները, այն ե՝ գեղատները, սանատորիումները, հանգստյան տները և այլ նման ձեռնարկությունները, յեթե վրանցից ստացված յեկամուտներն ամբողջովին գործադրվում են չիշված ընկերությունների վրա զրված խնդիրների իրականացման համար :

յե) Ինտերվենցիայի զոհերին աջակցող ընկերությունները և դրանց որպանները.

զ) «Եղապիտ» փայտափական ընկերությունը, նրա բաժանմունքները, ճաշարանները և իրենց մթերքները մասնավոր չուկայում սպասման հանող օժանդակ ձեռնարկությունները, ինչպես և անմիջականորեն նրա վերհսկողության տակ յեղած ճաշարանները, վորոնք կազմակերպված են բանվորների և ծառայողների կոոպերատիվների կողմից .

ե) Միջազգային կարմիր ստագիոնի կառուցողների ընկերությունները, վորոնք կազմակերպում են հասարակական հանդեսներ, զվարճություններ, բացառությամբ ընկերության կողմից պահպան կրպակների, բուժեաների և այլ տնտեսական ձեռնարկությունների, ինչպես և կարմիր ստագիոնի տերիտորիայից դուրս յեղած կինո-թատրոնների.

ը) Պետական աշխատավորական խնայողական դրամը կղները.

թ) Պետական կողմից կատարվող բոլոր պետական ապահովական գործառքները.

ժ) Դեղատները, սանատորիումները, հանգստյան տները, թեյատրներն ու ճաշարանները և ուսուցման-արտադրական արհեստանոցները վորոնք բացառապես վաճառում են այդ արհեստանոցները.

բում պատրաստվող իրերը. ինչպես և առանց կապալով տալու և անմիջականորեն մանուկների կյանքը բարելավող հանձնաժողովների կողմից շահագործվող առևտրական ձեռնարկությունները:

8. ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ.

Համաձայն ՀՍԽՀ Կենտրոնակոմի և Ժողկոմի Հունվարի 5-ի վորոշման, աղբարնակչությունն իր կրթական-տնտեսական կարիքները բավարարելու, այն եւ՝ զպրոցների, դյու-ղական ճանապարհների, փողոցների, մայթերի, հասարակական բաղանիքի, հիմանդանոցների, ամբուլատորիայի կառուցման համար կարող եւ դյուղական վայրերում անցիացնել ինքնահարկում:

Ինքնահարկման կիրառման հարցերը գրվում են գյուղացիների ընդհանուր ժողովի քննության և այլպիսին վորոշվում են ներկա յեղողների պարզ մեծամասնությամբ, ըստ վորում ժողովին ներ-կա յեղողների ընդհանուր թիվը չպետք է պակաս լինի ընտրական իրավունքը ունեցողների ընդհանուր թիվը:

Ինքնահարկման գումարի բաժանումն ըստ տնտեսությունների կատարվում է գյուղինորդների կողմից՝ հաշվի առնելով յուրաքան-չյուր տնտեսության ունակությունը: Հիշված բաժանումը ներկա-յացվում է գյուղառակային գործկոմին և վորի կողմից հաստատվե-լուց հետո՝ մտնում է ուժի մեջ:

Գյուղինորդների վորոշման դեմ բողոքները տրվում են չըջործ-կոմին. խսկ վերջինիս վորոշման դեմ՝ դավագործկոմին, վորի աված բուծումը համարվում է վերջնական:

Ինքնահարկման կարգով գանձված գումարներն ընդհանուր ժողովի համապատասխան վորոշման մեջ ցույց տրված նպատա-կին ծախսված չլինելու գեպքում, պատասխանատու անձինք յեն-թարկվում են պատասխանատվության քրեական կարգով:

Բացի հիշված կրթական-տնտեսական նպատակներից, որնքը բույրաբում են նաև ուրիշ նպատակների համար ինքնահարկում կատարելու՝ համաձայն ժողովին ներկա յեղող բոլոր բաղաքացի-ների լրիվ և կամավոր ցանկության: Այս վարույումը չի կարող վոր մի դեպքում պարտավորեցուցիչ լինել ժողովին չմասնակցած քա-զաքացիների համար կամ մասնակցած, բայց դեմ քվեարկած, ինչ-պես և քվեարկության ժամանակ ձեռնպահ մնացածների համար:

II. ՀԱՐԿՄԱՆ ՈԲՅԵԿՏՆԵՐԸ ՅԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՈՒ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԱՆԶՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

1. ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐԿ.

Ինչպիսի շենքեր են հարկման յենքակա.

Հարկման յենթակա յեն ստորև ցույց տրված չենքերը՝ անկախ նրանից, թե ում աիրապեսության տակ են գտնվում և կամ ով է ոգտագործում, լինեն զբանք մասնավոր անձինք և հիմնարկու-թյուններ և կամ պետական հաստատություններ: Հարկման յեն-թակա յեն. —

ա) Քաղաքի սահմաններում գտնված բնակելի շենքերը, դոր-ծարանները, Փաբրիկանները, պահեստները, առեւտրական շենքե-րը, թատրոնները, բաղանիքները և բոլոր տեսակի այլ շենքերը՝ դրանց սպասարկող բոլոր կառուցումների հետ միասին:

բ) Քաղաքի սահմաններից դուրս գտնված շենքերը և ընդհան-րապես բոլոր կառուցումները, կամ գործարանային, Փաբրիկային և առեւտրա-արդյունաբերական գործունեության տրամադրված շենքերը կամ զբանց առանձին մասերը, ու զբանց սպասարկող բո-լոր կառուցումները և բանվորներին ու ծառայողներին տրամա-դրված բնակելի շենքերը.

շ) Ամառանոցներում գտնված շենքերը՝ դրանց սպասարկող կառուցումների հետ միասին, բացառությամբ գյուղատնտեսական հարկման յենթակա տնտեսությունների կաղմի մեջ մտնող այն շենքերի, վորոնք չեն չահագործվում վարձով տալու ճանապար-հով և այն շենքերի, վորոնց յեկամուտը հաշվի յե առնված գյու-ղատնտեսական հարկման միջոցին:

Ինչպիսի շենքեր են ազատվում հարկումից.

ա) Ռազմածովային Ժողկոմատին սահմանված կարգով տրա-մադրված շենքերի այն մասերը, վորոնք անմիջականորեն զրազեց-ված են զորամասների կողմից.

բ) Պետական մասակարարման տակ գտնված հիմնարկությունների կողմից զբաղեցված չենքերի այն մասերը, վորոնք անմիջականորեն ծառայում են ավլալ հիմնարկության կարիքներին:

գ) Ճանապարհների Հաղորդակցության ժողկոմատին պատկանող չենքերը, վորոնք գտնվում են յերկաթուղային տրանսպորտին տրամադրված հողամասերում և վորոնք անմիջականորեն ողտագործվում են Ճան. Հաղ. ժողկոմատի կողմից՝ տրանսպորտի շահագործական կարիքների համար:

դ) Արհեստակցական միությունների և նրանց մարմինների կողմից հիմնարկության, աշխատանքի պալատի և բանվորական կազմակերպությունների կուլտ-կրթական հիմնարկությունների համար զբաղեցված չենքերը:

յ) Սանամորիությունների, հանգստյան տների, և հաշմանդամային հիմնարկների կողմից զբաղված չենքերը, վորոնք գտնվում են Սոցալահովադրության և նրա տեղական մարմինների հովանավորման տակ և վորոնք առանց կապալով արմելու ողտագործվում են հիշված հաստատությունների համար:

զ) Կառուցման իրավունքի պայմանագրի հիման վրա կառուցված կամ վերականգնված բնակելի չենքերը՝ կառուցման կամ վերականգնման որից սկսած յերեք տարի ժամանակով:

ե) Զինվորական ծառայության մեջ գտնվածների և նրանց ընտանիքներին պատկանող չենքերը, յեթե այդ չենքերն անմիջականորեն զբաղեցված են իրենց կողմից և չեն շահագործվում վարձու առաջորդով:

զ) Պետական արդյունաբերության ձեռնարկությունների կողմից զբաղված չենքերը, վորոնք յենթարկված են կոնսերվացիայի:

ե) Ռազմական արդյունաբերության գլխավոր վարչության ձեռնարկությունների կողմից և ուղամական բնույթի մթերքներ արտադրող պետական ողպահնացության արդյունագործական ձեռնարկությունների կողմից զբաղված չենքերը:

ը) Գյուղական վայրերի բնակելի չենքերը՝ դրանց սպասարկող կառուցումների հետ միասին, բացի այն չենքերից, վորոնք ողտագործվում են բացառապես ամսուային չենքերի համար և վորոնց յեկամուտը հաշվի առնված չե գյուղատնտեսական հարկան միջոցին:

թ) Գյուղական արհեստավորների և տնայնագործների, նույնական և վոչ ավել, քան յերեք վարձու բանվոր ունեցող գյուղական

արհեստավորական և տնայնագործական ձեռնարկությունների կողմից՝ իրենց և իրենց արհեստի համար ողտագործվող չենքերը:

ժ) Աստվածապահության նպատակին արամագրված շենքերը:

թիջպես և կառարկում գնահատումը.

Հանրապետական գնահատու հանձնաժողովի ընդհանուր ցուցմունքների համաձայն, գալառային գնահատու հանձնաժողովները մշակում են չենքերը կատեգորիաների բաժանելու, գնահատման հիմունքների և յուրաքանչյուր տեսակի ու ձեի չենքերի արժեքի միջին նորմաների նախադիճը։ Հիշված նախագիծը Հանրապետական գնահատու հանձնաժողովի կողմից քննվելուց և հավանություն ստանալուց հետո ներկայացվում է կենտրոնակոմի հաստատման։ Արդեն հաստատված գնահատման բարձրագույն նորմաները ստացվելուց հետո, չենքերի գնահատման գալառային հանձնաժողովները նշված սահմաններում վորոշում են մանրամասն նորմաներն՝ ըստ չեքերի տեսակների։ Գնահատման նորմաների աղյուսակը կազմելուց հետո, գալառա-դնահատու հանձնաժողովներն անցնում են յուրաքանչյուր առանձին չենքի հարկման արժեքի վորոշման՝ համբաւայն չենքի խորանարդ պարունակության։

Գնահատման նորման վորոշելու միջոցին հաշվի յե առնվում չենքի խորանարդի նյութական արժեքը, չեմնվելով գնահատման մոմենտում յեղած նյութի և բանվորական ձեռքի արժեքի տվյալների վրա։

Նույն այդ հանձնաժողովը սահմանում է գնահատման իջեցման տոկոսը, նկատի առնելով չենքի կառուցման ժամանակը, սակայն վոչ ավել գնահատման արժեքի 50%-ից։

Իրենց չափով, կառուցումով և արժեքավորությամբ աչքի ընկնող չենքերն յենթարկվում են հասուկ գնահատման՝ տեղում ստուգելու, նկարագրելու և դրանց առանձին մասերը դնահատելու հանապարհով։

Նոր կառուցված կամ վերանորոգումն ավարտված և շահագործման համար պիտանի յեղած չենքերը մտցվում են գնահատման մեջ և յենթարկվում են հարկման, չենքի մի մասը բնակության համար տրվելու կամ առեւրական, արդյունաբերական ձեռնարկության համար տրվելու կամ առեւրական, արդյունաբերական ձեռնարկություն հիմնելու հաջորդ կիսամյակից սկսած։ Կառուցման իրավունքով կառուցված բնակելի չենքերը յենթարկվում են հար-

կի հիշվածների կառուցման որից սկսած յեռամբյա ժամկետի լրանալու հաջորդ կիսամյակից :

Տնատիրոջ կամքով, ինչպես և հրդեհի և այլ դժբախտ պատահարների հետևանքով շենքն ամբողջովին կամ նրա մի մասը քանդվելու գեղքում, տնատերն ազատվում է հարկումից, սկսած շենքը քանդված, վոչնչացած կամ վնասված լինելու հաջորդ կիսամյակից :

Դնահատման հարցերի վերաբերյալ միջնորդությունները լուծվում են շենքերի դնահատման գավառային հանձնաժողովներում :

Ինչպես եւ վորոշվում հարկաչափը .

Շենքի նյութական գնահատումը վերջացնելուց և հնության համար առկոսային իջևումը կատարելուց հետո, հաշվվում է չարկաչափը, հիմք ունենալով գնահատման արժեքի $\frac{1}{4}\%$ -ը տարեկան։ Այս $\frac{1}{4}\%$ -ը հարկի բարձրագույն կոպարն է, բայց վորում տեղական խորհուրդները կարող են նաև ավելի ցածր կոպար սահմանել։ Համաձայն կենտղործկոմի և Ժողկոմի ստորհի վորոշման՝ յերեք տարին մեկ անգամ կատարվում է շենքերի ընդհանուր գնահատում։ Ընդհանուրը գնահատումների միջանկյալ շրջանում անշրաժելու ուղղումներ և մացվում ցուցակներում և գույքամատայններում։

2. ՀԱՐԿ ԲԵՌՆԵՐԻՑ.

Յերկաթուղով և ջրային հաղորդակցության ճանապարհով փոխաղբով բեռների հարկը կամ այլ կերպ ասած «տոննատուրություն» գանձվում է յերկաթուղակայաններում, նաև կայաններում կամ նախանդիսաներում։ Տուրքը գանձվում է այդ կայաններից բոլոր արտահանվող և ներմուծվող բեռներից, ում ել պատկանելիս ինեն դրանք (պետական, կոոպերատիվ, մասնավոր) և կամ ինչ բնույթ ել կրելու վճեն։ Միևնույն բեռը հարկվում է յերկու անդամ, մեկ անգամ ուղարկող և մյուս անդամ՝ ստացող կայարանում, յեթե հիշված կայարաններում հարկի գանձում և սահմանագում։

Ինչպիսի բեռներ են ազատվում հարկաւմից։

Հարկումից ազատվում են . . .

ա) Տվյալ կայարանից տրանզիտով գնացող բեռները։ Տրանզիտ բեռներ համարվում են նրանք, վորոնք յերկաթուղով կամ

ջրային ճանապարհներով փոխաղբում են և . Ս. Հ. Մ. տերիտորիա-յով կամ ներմուծվում են արտասահմանից, և վորոնք և . Ս. Հ. Մ. տերիտորիայի վրայով արտածվում կամ ներմուծվում են արտասահմանյան մի պետությունից մյուսը՝ ըստ վորում այն բոլոր կայարանների նկատմամբ, վորոնցով փոխադրվում են այդպիսիները։

բ) Սահմանված կարգով կուտակող կայարաններ հայտարարված պահպատճերն ու կայարանները փոխաղբով բեռները։

շ) Արտասահման արտածվող հացի բեռները, ինչպես հումնույնպես և վերամշակված հացամթերքը, յուղամթերքը և առաջ վերամշակման մնացրդները, այն եւ քուսպ, թեփ և այլն։

գ) Բացառապես զինվորական հիմնարկությունների կարիքների համար փոխադրվող զինվորական կոմիսարիատին պատկանող բեռները։

յ) Յերկաթուղային հաստատություններին կամ ջրային տրանսպորտին պատկանող բեռները, բացառությամբ կապալառառների կողմից փոխադրվող կամ ստացվող բեռներից։

շ) Ֆինժողկոմատին պատկանող արժեքավոր բեռները։

ե) Փոստային բեռները և Փոստհեռժողկոմատին պատկանող բեռները, վորոնք բացառապես ծառայում են շահագործական նըպատակների։

ը) Կալանավորների բեռները։

թ) Արտիողկոմատի, նույնպես և արտասահմանյան պետությունների գիշանաղիտական փոստը։

ժ) Տարբերային աղետների յենթարկված աղղաբնակչության ողնության համար փոխադրվող բեռները։

ի) Հողոգտագործման կանոնների կարգով տեղափոխվողների բեռները։

լ) Գրականության բեռները, վորոնք ուղարկվում են պետական և կուսակցական կազմակերպությունների, նույնպես և արհմատությունների հրատարակչությունների կողմից։

ի) Ուղևորների հետ միասին փոխադրվող ուղերեսները

Ով եւ հանդիսանում հարկատու։

Հարկատուներ հանդիսանում են բեռներ փոխադրող անձնիք՝ փոխադրելու միջոցին և բեռներ ստացող անձնիք՝ ստանալու միջոցին։

15214 - 57

Հարկը հաշվելու միջոցին հիմք են ունենում յերկաթուղու կողմից մեկ կելումետր բեռի փոխաղբման համար գանձվող սկզբանական տարիֆային կոպարը : Այս կոպարները ցույց են արված ձան . Հաղորդ . ժողկոմատի հրատարակած տարիֆների ժողովածուի մեջ :

Զանազան տեսակի բեռների համար սահմանված են յերկաթուղային տարբեր կոպարներ , իսկ տեղական հարկերի գանձման համար սահմանված է սկզբանական տարիֆային կոպարի մի քանի վորոշ հարաբերութկուններ , վորոնցով և սահմանվում է տեղական հարկի կոպարը :

Բեռների հարկը վճարվում է կայարանում բեռներն ուղարկելու կամ ստանալու միջոցին և հարկի վճարման համար համապատասխան անդորրագիր և արվում յերկաթուղային դորձակալների կողմից :

3. ՀԱՐԿ ԲՈՐՍԱՅՑՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՑ .

Դորձարքների հարկին յենթարկվում են գույքերի բարոր տեսակի գնման կամ վաճառքի դորձարքները , վորոնք կատարվում են Փոնդային կամ ապրանքային բորսայում՝ անկախ այն հանդամանքից , թե այդ դորձարքները կատարվում են կամովին , թե՝ պարտավորեցուցիչ կերպով : Նույնպես և նշանակություն չունի , թե ինչ կողմերի միջև ե տեղի ունենում դորձարքը—լինեն դրանք պետական հիմնարկություններ կամ մասնավոր անձննք :

Հարկը հաշվելը և գանձելու տեխնիկան .

Ապրանքային բորսայում կատարված դորձարքների հարկը բարձրագույն կոպարը կազմում է 0,1%՝ դորձարքի գումարից , իսկ Փոնդային բորսայում՝ 0,05%-ը : Հարկման որյեկտը հանդիպանում է դորձարքի գրանցումը բորսայի գրանցման գրքերում , իսկ դորձարքի գումարն անորոշ լինելու գեղքում հարկը գանձը վում և դորձարքի գումարն պարզեցնելուց հետո :

Յեթե դորձարքը գրանցված է և հարկը գանձված է , ապա դորձարքի լուծման դեպքում վճարված հարկը չի վերադարձվում և լուծմած դորձարքն յերկրորդ անդամ գրանցվելիս՝ հարկը վճարվում է ընդհանուր հիմունքներով :

Հարկը գանձվում է բորսային կոմիտեների կամ աբուրբա-

ռային դորձարքների գրանցման համուկ բյուրոների կողմից : Վճարման ժամկետը համարվում է այն որը , վորոնք ըստ դորձող կանոնների պետք է դրանցման յենթարկվի դորձարքը :

Բորսային կոմիտեները պարապուր են ֆինրաժնում գրանցված և ժամանակաված անդորրագրային գրքույիներից հարկի գումարի ստացման համար համապատասխան անդորրագրեր տալ հարկատուներին :

Հարկը սխալ հաշվելու համար յեղած բողոքները տրվում են՝ տեղական հարկերի և տուրքերի համար սահմանված ընդհանուր կարգով :

4. ՀԱՐԿ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՅՉԻՆԵՐԻՑ ՅԵՎ ԲԱՆՉԱՐԱԿՆՈՑՆԵՐԻՑ .

Վորտեղ կարելի յե անցկացնել հարկը և ինչ և յենթակա հարկման .

Արդյունաբերական այդիների և բանջարանոցների հարկին յենթակա յե՞ն՝ բոլոր պայտառու պարտեզները , խաղողի այդիները , բանջարանոցներն ու բոստանները , վորոնք գանձվում են արհեստագործական հարկի գանձման վայրերի ցուցակի համաձայն առաջին յերեք գոտիներին (բարձր , միջակ , միջակից բարձր) կցված քաղաքների սահմաններում : Որենքը թույլատրում է Յերեան քաղաքում հարկման յենթարկել նաև քաղաքի սահմաններից գուրս գտնված այդիները , բայց վոչ հեռու 10 վերստից :

Մեզնում , Հայաստանում այդ հարկը կարելի յե սահմանել Յերեանում և լենինականում :

Ինչը պետք է ազատել հարկից

Արդյունաբերական այդիների և բանջարանոցների հարկից ազատվում են .

ա) քաղաքի սահմաններում գտնված և կարմիր բանակում ու նավատորմում ծառայության մեջ յեղածների ընտանիքների ողոտագործման տակ յեղող այդիները , վորոնք անմիջանորեն մըրշակվում են հիշված ընտանիքների անդամների կողմից՝ առանց վարձու աշխատանքի կիրառման , յեթե յուրաքանչյուր ընտանիքին դալիս է 120 քառ . սաժենից վոչ ավել :

Հիշված արտօնությունը տարածվում է գորացրվածների և նրանց ինամքի տակ յեղած ընտանիքի անդամների վրա՝ մեկ տա-

րի ժամանակամիջոցում, հաշված զորացրման կամ անժամկետ արձակուրդ ստացած լինելու որից:

գ) մի տնտեսության ողտադորձման տակ յեղած $\frac{1}{10}$ դեսյատինից վոչ ավել տարածություն զբավող բոստաններն ու բանջառանոցները, յեթե այդ հողամասներում չկան արդյունաբերական նպատակով շահագործվող ջերմոցներ.

դ) պետական Հիմնարկությունների և ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների կովեկտիվ ողտադորձման տրամադրված այդիներն ու բանջարանոցները, յեթե կովեկտիվի յուրաքանչյուր անդամին դալիս և վոչ ավել 60 քառ. սոժենից.

յե) բանջարանոցները, վորոնց մի մասը հատկացված է հայտարարությանը:

զ) հինգ տարվա հասակին չհասած նոր պայտառու տնկարանները:

Ովեր են հարկ վճարողները.

Այդիների և բանջարանոցների հարկ վճարում են այն անձինք, հասառատություններն ու կաղմակերպությունները, վորոնց տնորինության են անցնում այդիների և բանջարանոցների յեկամուռները, անկախ այն հանդամանքից, թե այդին կամ բանջարանոցը տրամադրված է մշտական ողտադորձման համար, թե կաղալային պայմանագրով, կամ մի այլ հիմունքով շահագործում է ժամանակավորապես:

Հարկը հաշվելը և գանձելու տեխնիկան

Այդիների և բանջարանոցների հարկման հիմք ծառայում է այդիների և բանջարանոցների բանած հողամասի տարածությունը:

Ցուրաքանչյուր մեկ քառակուսի սաժենի հարկի կողարը սահմանում են տեղական խորհուրդները, վորպիսին չպետք է գերազանցի 0,8 կոպ. քառ. սաժենի համար:

Հարկի վճարման ժամկետը նույնագես սահմանում են տեղական խորհուրդները, ըստ վորում այդ ժամկետը համաձայնեցնում են մթերքների իրացման շրջանին: Ժողկոմիութիւնի կողմից համաձայն ժամկետը նույնագես սահմանում է մի շուրջ 1 օր: Հարկի վճարման ժամկետը սահմանված է այդին համար 1-ին:

Հարկի վճարման ժամկետի և հարկի գումարի մասին հարկառանքներին ծանուցվում են նրանց հարկաթերթեր ուղարկելու, կամ տեղական պայմաններին նպատակահարմար մի այլ միջոցով:

20

Սրատնություն ստանալու կամ հարկից բոլորովին ազատվելու իրավունք ունեցող անձինք և Հիմնարկությունները պարաւավոր են հայտարարություններին և ցույց տալ հարկից ազատելու հիմունքը, կցելով համապատասխան փաստաթղթեր: Անհրաժեշտ և հիշված հայտարարությունները տալ Գործկոմի կողմից սահմանված ժամկետին, վորովհետեւ ժամկետին անցնելուց հետո այլևս դրանք քննության չեն առնվի:

5. ՏՈՒԻՐՔ ԱՆՏԱՌԱՄՆՅՈՒԹԵՐԻՑ:

Ինչն ե հարկվում և ով ե հարկառու հանդիսանում

Անտառանյութերի տուրքին յենթարկվում են անտառամասերում վճարով պատրաստվող վողջ անտառանյութերը: Տուրքը վրա ճարողները հանդիսանում են բոլոր այն անձինք, ինչպես պետական, նույնպես և մասնավոր Հիմնարկությունները և կաղմակերպությունները, վորոնք անտառամասում անտառանյութեր են մթերում:

Տուրքը հաշվելը և գանձելու տեխնիկան:

Անտառանյութերի տուրքն հաշվվում է անտառամասներից բաց թողնվող անտառանյութերի իրական արժեքի վրա տոկոսային հավելում անելու միջոցով, ըստ վորում այդ տոկոսը չպետք է անցնի՝ պետական, կոողերատիվ Հիմնարկությունների համար 2, իսկ մնացած բոլորի համար 5%-ից:

Տուրքը գանձվում է Հողժողկոմատի մարմինների կողմից կոծղավճար դանձելու միջոցին՝ հիշված վճարի համար սահմանված հիմունքներով ու ժամկետին: Հողժողկոմատի կողմից անտառանյութերի սպառողներին՝ անտառանյութերի արժեքն անմիջականորեն ֆինժոկոմատի գրամարկղը մուծելու համար վճարովի հայտարարություններ արժելու դեմքում, այդ հայտարարությունների մեջ մտցվում են նաև տեղական տուրքը, ճշտորեն ցույց տալով գրա չափը:

6. ԱՆԱՍՈՒՆԵՐԻ ՅԵՎ ԴՐԱՆՑ ՀՈՒՄ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆԱՍՆԱ-ԲՈՒԺԱ-ՔՆՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՐՔ:

Հարկման բայեկուները.

Անասնաբուժա-սանիստարական տուրքին յենթակա յեն առեւրառարդյանաբերական անսառունները, այն և՝ խոշոր յեղջյուրա-

վոր անասունները, ձին, ուղտը, եշը, խողը, և ապա կենդանիների հումք մթերքները, այն եւ միսը, ներքին որդանները, խողի ճարպը, չհալված ճարպը, անմշակ կաշին, մորթին, յեղջուրները, սմբակները, խողի մաղը և ձիու մաղը, վորոնք վաճառվում են տեղական շուկայում, կամ բերգում ու փոխադրվում են մի վայրից մյուսը, անկախ նրանից, թե ում են պատկանում դրանք:

Տուրքը հաշվելը և գանձելու տեխնիկան

Տուրք վճարողները հանդիսանում են անասուններ և կենդանիների հումք մթերքներ վաճառող կամ վոխադրող անձինք ու հիմնարկությունները:

Անասնաբուժա-սանիստարական տուրքի կոսպարը չպետք է գնարականցի անասունների և դրանց հումք նյութերի նորմալ զնահատման $\frac{1}{4}$ -ից, բայց վորում մի դրուի խոշոր անասունի տուրքի կոսպարը չպետք է ավելի լինի 30 կոպ.։

Նորմալ զնահատությունը սահմանվում է համապատասխան գործկոմների վորոշումով և չպետք է գերազանցի Ա. Ֆ. Ս. Խ. Հ. Առետրական ֆողկոմմատի և Ֆինժողկոմմատի վորոշմամբ համապատից նորմալ զնահատման կոսպարից։

Ստորև բերում ենք այդ առթիվ Ա. Ֆ. Ս. Խ. Հ. Առետրական ֆողկոմմատի և Ֆինժողկոմմատի 1928 թ. մարտի 26-ի № 3 վորոշումը։ Հրատարակված է 1928 թ. մարտի 28-ի № 72 «Զարյա Վաստիկ»-ում։

Ի վերաբեր տեղական ֆինանսների 1926 թ. ոգոստոսի 9-ի հունադրության 51-րդ հարգածի ծառաթիվության հիմն մրա հրատասարկության 1927 թ. մարտ 22 ի և 14/29 գործունեա Ա.Ս.Ֆ.Խ. Առետրական ժողկոմատը և Ֆինժողկոմատը մողկոմատը վորոշեցին։
1. Ա.Ս.Ֆ.Խ. Հ. Տ. առետրական ֆողկոմմատը անասունների և դրանց հումքերի անասնաբուժական սանիստարական բնաւորյան սուրք գոնդարակություն գներով։

Ա. ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

ա) Մի զլուխ կովը	80 ա.
բ) Խոշոր յեղջուրավոր անասունը	100 ա.
շ) Զին և ուղարք	150 ա.
դ) Ջորին	75 ա.
յ) Եցր	25 ա.
շ) Հոռթու և ձաղը	20 ա.
ե) Խողը	20 ա.
ը) Վոխարը, զուը և աւծը	12 ա.
թ) Գալը, ուր և մինչեւ 6 ամսական խողի ճռւտը	4 ա.
ԺԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Անասնաւումա սանիստարական տուրքը չպետք է համար։	ան նի 30 կոպեկից մի զլուխ խոշոր յեղջուրավոր անասունի

Բ. Կ. Ա. Շ. Ի

ա) Խոշոր յեղջուրավոր անասունների հումք թվում նաև զամեցի թարմ կաշու 1 կիլոգր	56 կոպ.
բ) Ա. զոի կաշին հատը	8 առոք.
շ) Զինունը՝ հատը	3 առոք.
դ) Մանր և զջուածվար անասունների մորթին ան կոմիտից և առաջից հարթեցից հատը	1 ա. 50 կ.
յ) Ծովաչան	2 ա.
շ) Վայրի վարպի	1 ա.
Գ. ՄՈՒՃՏԱԿԱԵՂԻՆ	
ա) Կուգի կամ չըպագեսի մորթին	20 ա.
բ) Աղլիսի	5 ա.
դ) Գոյլի, արձի	4 ա.
դ) Գորի կատի, գոր-	
շուկի և գոյլաշան	1 ա.
յ) Նապաստեկն հազարի	20 կ.
դ) Զիշվածները	1 ա.
Զ) ԽՈՃԻ ՄՈԶԶ ՃԵԼ ՁԻՒԻ ՄԱԶ	
ա) Զարբրած խոզի մազ	3 ա. 75 կ.
բ) Մարբրած և կիսաֆարբիկաս	6 ա. 25 կ.
դ) Զիու մազը	1 ա. 90 կ.
Ճ. Բ. Ո. Ի. Բ. Դ	
ա) Վոչխարի բուրդ, կիլոգր.	50 կ.
բ) Աւատի զոմեշի և ձիու բուրդ, կիլոգրամ	1 ա. 50 կ.
շ) Ա. ԽՈՃԻ ԱՆԿՍՈՒԽՆՆԵՐԻ ՊՈԶԸ.	20 կ.
ա) Պոչը վերջին հողի հետ միասնին, կիլոգր.	7 կ.
բ) Պոչի մազերը, կիլոգր.	37 կ.
ե. Ա. ՋԵՄԵԲԵՐԸ	
ա) Վոչխարի փալատիք աղած	4 ա. 60 կ կիլոգր.
բ) Վոչարի կայլաղիք	95 կ.
դ) Ֆալարի փալատիք չորս	1 ա. 25 կ.
դ) չորս աղած	1 ա. 20 կ.
յ) Վերջնաղիք	95 կ.
շ) Կույլաղիք չորս	3 ա. 20 կ.
ե) Կույլաղիք աղած	75 կ.
ը) Գարկու և միզափամփուշ	
չորս	1 ա. 55 կ.
ՑԵՂԶՅՈՒՐԸ, ՍՄԲԱԿՆ ՃԵԼ ՎՈՍԿՈՐՆԵՐԸ	
ա) Ցեղյուրը, սմբակը և գորկորերը, կիլոգր.	13 կ.
թ. Ճ. Ա. Բ. Գ. Ը.	
ա) Տերինիքական ճարպ, կիլոգրամ	44 կ.
բ) Խողի	60 կ.

<i>ա) Մարթած, մաշկած և մաքրած խոչոր յեղի</i>	
<i>անսպառնը, համբ</i>	60 սուր
<i>բ) Ն լոյն գոմեցը, համբ</i>	45 սուր
<i>շ) Նոյն խոշոր յեղջաւորավոր անտ-</i>	
<i>առնենիքը՝ սառացրած</i>	45 սուր
<i>դ) Նոյն վայրի վարպետ</i>	30 սուր
<i>ի Ա Զ Ա Զ Ա Զ</i>	

$U_{\gamma\gamma\mu}, \ U_{\nu\nu\mu\eta\mu},$

1. *Φιλοσοφία*

Філософія в Україні

Ներկա վարողական հրամագրականութ վերանայմ են անհամաների և
դրանց համապատասխան հարցու զնաշատաման Հարցի վերաբերյալ ԱՄֆել
ուահմաններուն Անդրանիկական Ժողկամատիք և նրա հանուապետական
փակուրությանների վեհական Անդրանիկան կողմէց կողմէց առաջը-
բութ Հրամագրական բարու վարչությունները

3 Ներկա գորոշման խոխտողները պատասխանատվության համապատասխան հանդապահության բառապես լինելու վեհականությունը:

4 Եկրիւս զօրացումը ուժի մեջ և մտնելով հրապարակման սրբի:

Արքայի մասունքները չունեն ոգ

Ներկա տուրքի գանձումը թույլատրվում է միայն անտառաբուժական քննության փաստական կերպուման միջոցին։ Մի վայրից յուսը փոխադրելիս կամ անշափոփելիս տուրքը գանձվում է միայն մեկ անդամ, ունավորապես անսպառները փոխազելու վայրում։

Անսուբների կրկին քննության դեպքում, տերերն ազատվուց են նորից տուրք վճարելուց, յեթե ներկայացնում են վճարված տուրքի անդորրագիրը:

Տուրքը դանձվում է բուժաւահնիտարական հսկողության կողմից, զորք զբա համար տալիս է հատուկ անդրադարձեր և նշանակում է առանձին հատուկ հայտարարներ:

7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ

Ովքեր են հարկման յենթակա .

Վոչ-աշխատավորական տարրերի կողմից քաղաքում զբաղեցրած բնակելի տարածությունը տեղական խորհուրդները յևնթարկում են լրացուցիչ բնակարանային հարկի, բացի բնակարանային վարձից և այլ Հարկերից :

Ներկա հարկից ստացված դումաբը ծախսվում է բացառապես բանվորական շինարարության համար:

Բնակարանային հարկեն յենթակա յեն վոչ աշխատավորական յեզամուտի աղբյուրներ ունեցող բոլոր անձննք, վորոնք № 3 ցուցակով յենթարկվեմ են յեկամտային հարկման, այն եւ առեւտրականները, առանց վորոչ գրադիմոնք ունեցող անձննք եւ այն:

Հարկման վորակեռ հիմք ծառայում է հարկման յենթակա ահ-ձի և նրա խնամքի տակ կամ նրա հետ ապրոց ընտանիքի անդամ-ների կողմից զբաղեցրած բնակելի տարածությունը:

Դաստիարակ սենյակները և բնակելի շենքի մասը, վոր զբաղեցնում և առետրական կամ արդյունաբերական ձեռնարկությունը՝ հարկման յենթակա չե:

Հաշվումը և գանձման տեխնիկան

Բնակաբանային հարկի կոսպարհները սահմանում են տեղական խորհուրդների վորոշումով և չպետք է գերազանցեն որենքով նախատեսված բարձրագույն կոսպարհների չափեց, վորոնց մինի-ժումը սահմանված է յուրաքանչյուր քառակուսի մետրից 5 կոպ. և մաքսիմումը՝ 2 ո. 50 կ.—հիմք ունենալով յեկամտային հարկ-ժմն համար սահմանված գումար յեկամուտի սուբառ.

Հարկի հաշվումը և ծանուցումը կատարվում ե միաժամանակ՝ յեկամտահարկի հարկաչափը վորոշելու հետ միասին։ Հարկը՝ վրարկում և տեղական խորհուրդների համապատասխան վորոշմամբ ահմաններում։

Յեթև բնակարանային հարկի հարկատում փոխվում և ավելի
փոքր բնակարան կամ փոխադրվում է գյուղական վայրում բնակ-
վելու, ապա նա սեւք և հայտարարություն ներկայացնի համա-
պատասխան ռեզլակի հարկերի տեսչին՝ հարկը վերահաշվելու
համար:

8. *Ntusu.*

Linqhwelinup մաս

Մեյ պայմաններում ունտայի հայտնաբերումը՝ տնտեսական խմասուով՝ չափազանց գեվարին դորձ է, նկատի ունենալով մեր տնտեսա-իրավական արդի պայմանները։ Այդ պատճառով ունտային պետք է վերաբերվել, վորսես քաղաքական վայրերում

Հողամասերից ոգտագործումը իշխանության կողմից չափավորակ վարձ: Որենքի տեսակետով պետությունը հանդիսանալով հողի սեփականատեր՝ սակագին և նշանակում, ոգտագործման յենթակա հողերին, նկատի ունենալով վոչ թե դրանց տված փաստական յեկամուտը, այդ այդ հողամասերի ոգտագործման յեղանակն ու գտնված վայրը: Այսպիսով, չենքերի տակ յեղած հողամասերի համար սահմանվում եւ տարբեր կողար, քան այդիների և այլ հողամասերի համար:

Ինչպիսի հողամասեր են հարկիան յեկամա

Ռենտան գանձվում եւ հիմնարկությունների, կազմակերպությունների և առանձին անձանց ոգտագործման տակ յեղած կառուցված և վոչ կառուցված հողամասերից, սակայն մի հիմնական պայմանով, յեթե նշված հողերից կուղալավարձ չի գանձվում. բայց կան հողամասեր, վորոնցից չի թույլատրվում կապալավարձ գանձելու, այլ կարելի յեմիայն ռենտա գանձել:

Այդ հողամասերը հետեւյալներն են.

ա) Սեփականության և կառուցման կարգով մասնավոր Փիզիքական և իրավական անձանց պատկանող չենքերի տակ յեղած հողերը.

բ) ըստ իրենց կանոնադրության պետական ձեռնարկություններին տրամադրված հողերը.

գ) պետության պատկանող չենքերի տակ յեղած հողերը, բացի աեղական խորհուրդների գույքերի մէջ մտնող չենքերը.

դ) անսահմանավակ ժամանակով բնաշինարարական կոոպերատիվ ընկերություններին տրամադրված հողերը.

Վորոնիք են ազատվում

Գանձումից աղատվում են հետեւյալ հողերը՝

ա) գերեզմանոցների գրաված հողամասերը.

բ) Ռազմածովային ժողկոմատի տրամադրության կամ ողոտագործման տակ յեղած պոլիտենիկաների, ողամակայանների և այնի կողմից գրավված հողամասերը.

շ) Բերդերի տակ յեղածները.

դ) տրամսպորտին հատկացվածները.

յե) գյուղատնտեսական ոգտագործման տակ յեղածները, վորոնք յենթակա յեն գյուղատնտեսական հարկի.

զ) նախահաշվային կարգով պահպող պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների չենքերի տակ յեղած հողերը, յեթե այդ չենքերը վարձով չեն տրվում.

ե) Ելքորական կայանների և Փոստհեռժողովատի այլ տեխնիքական կառուցումների տակ յեղած հողերը.

ը) այն չենքերի և դրանց պատկանող բակերի և պարտեզների տակ յեղած հողամասերը, վորոնք զրադեցրել են կրթական, ուսուցման և բուժական հաստատությունները, հանդսայան տները, մանկատներն ու մանկական դաշտները և հաշմանդամային հիմնարկությունները.

թ. աշխատանքի պալատականների, արհեստակցական կազմակերպությունների չենքերի, բանվորական ակումբների, և գյուղացուների տակ յեղածները.

ժ) մանկական հրապարակների և Փիզկուլտուրայի սպորտի առաջինների տակ յեղածները.

ի. փոխադարձական պայմանով արտասահմանյան գիվանադիտական ներկայացուցիչների կողմից զրադեցրած չենքերի տակ յեղածները.

լ) Զինվորական ծառայունների և նրանց ընտանիքների զրադեցրած չենքերի, այլիների և պարտեզների տակ յեղած հողերը, յեթե այդ չենքերը վարձով չեն տրվում, իսկ հողամասերը մշակվում են նրանց ընտանիքների կողմից՝ առանց վարձու աշխատանքի կիրառման.

Ով ե ունտա վեարող հանդիսանում

Ռենտան գանձվում եւ չենքի սեփականատերից, կամ այն հիմնարկությունից, կազմակերպությունից և ձեռնարկությունից, ուժ տրամադրված և հողամասը, կամ հողամասում կառուցված չենքը: Ենքերի տակ յեղած հողամասերի նկատմամբ ռենտա վճարողը հանդիսանում են չենքերի սեփականատերերը, իսկ մնացած հողամասերի նկատմամբ՝ այն հիմնարկությունը, ձեռնարկությունը կամ անձը, վորին հանձնված և հողամասի ողոտագործումը:

Հաշվելն ու գանձման տեխնիկան

Թեհասայի կողարներն սահմանում են տեղական խորհուրդները, հիմնվելով քաղաքներն այս կամ այն դասին կցելու առթիվ ՀՍԽՀ. Տնտեսական Խորհրդակցության վորոշման վրա, և՝ յուրաքանչյուր դասի համար սահմանված կողարների շրջանակներում:

Տնտեսախորհրդակցության վորոշմամբ Յերեանը կցված է 4-րդ, իսկ Լենինականը 3-րդ դասին: Հայաստանի մյուս քաղաքներում ունետա չի դանձվում, վորոշիտակ այնուղղ դրադարկ և անցկացվում:

Յերաքանչյուր քառ. մետրի բարձրագույն կողարն ըստ դասի բարը՝ հետեւալին է.

Հ Ա Դ Ե Ր	Վ Ո Ր Ո Ն Ք	Զ Բ Ա Դ Ե Ց	Վ Ո Ր Ո Ն Ց	Ե Ւ
Քաղաքական գործադրության դասին	Բնակչության շենքերության դասին	Անդամական հանձնության թիւներին պատճենահանության դասին	Արդյունաբերության ձեռնության վրա պարագաների հանձնության դասին	Կառուցանալու աշխատավորության դասին
III	6	24	9	6
IV	9	36	12	9
				2
				3
				2

Պետական հիմնարկությունների և ձեռնորդկությունների համար ունետայի կողարն իջեցվում ե. վոչ պակաս, քան 20%՝ հանդեպ մասնավոր անձանց կողարի:

Դրույքը հաշվում ե հոկտեմբերի մեկից սկսվազ և հաջորդ տարվա սեպտեմբերի 30 վերջացող յուրաքանչյուր անտեսական տարվա համար, ըստ հոգամասերի այն դրության և տարածության, վոր սահմանված ե հաշվեառությով կամ ընդհանուր սոսուղությով: Հաշվումը և հարկումը կատարվում ե համաձայն գույքի առանձին մասերի, կիրառելով ըստ հոգամասերի սոսագործման բնույթի սահմանված կողարները (չենքեր, այլիներ, բակ և այլն), և գույքի ավյալ մասի համար տարիքով սահմա-

ված կոպարը բազմապատկել գույքի այլ մասի տարածության քառակուսի մետրի քահակության հետ: Հարկման աշխատանքը վերջացնելուց հետո, ունտա վճարողներին ծանուցվում ե հարկաթերթեր ուղարկելու միջոցով՝ վոչ ուշ, քան մեկ ամիս առաջ վճարման ժամկետից:

Վճարման ժամկետը սահմանվում ե համագատասխան տեղական խորհրդների վորոշումով՝ բյուջետային տարվա սահմաններում:

Մրանով մենք կվերջացնենք Անդրկենտղործկոմի և Ժողկոմիորհի 1926 թ. ոյնուոսո 9-ին հաստաված Տեղական Ֆինանսների Կանոնադրության հիման վրա անցկացվող տեղական հարկերի և տուրքերի մասին և կանցնենք ՀՍԽՍ Կենտղործկոմի և Ժողկոմիորհի 1928 թ. դեկտեմբերի 19-ի վորոշման համաձայն սահմանված տեղական հարկերին ու տուրքերին:

9. ՀԱՐԿԻ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ

Հարկման պայեկտները

Փոխադրական միջոցների հարկին յենթակա յեն՝ ինչպես մասնավոր անձինք, հասարակութան կարմատերությունները, նույնութեա և զանազան պաշտոնատար անձինք, պետական ձեռնարկություններն ու հիմնարկությունները:

ա) սեփական ուղևորման և ըրջագայության համար ողտարկություն հեծնելու (անձանելու) ձիյերը, վարոնք պատկանում են ինչպես մասնավոր անձանց, ձեռնարկություններին, նույնպես և պաշտոնատար անձանց ու պետական հիմնարկություններին. յեթե հիշված ձիերը բացի իրենց ուղղակի նպատակներին ծառայելուց ոգտագործում են նաև անտեսական նպատակով. այդ գեղագում ել այլպիսիները հարկիում են վորպես վերում ցույց տրվածները.

բ) բանվոր ձիեր հաշվամ են այնպիսիները, վորոնք ոգտարկություն են բացառապես անտեսական և ոպերացիոն նպատակների համար և ծառայում են վորպես յեկամուտի աղբյուր, ըստ վորում բանվոր ձիերը հեծնելու համար պատահական ողտագործելը չի կարող հիմք ծառայել այլպիսիները վորպես հեծնելու ձիեր հարկելուն.

գ) փոխադրական զբաղմունք ունեցող և վարձով հանապարհոներ ու բեռներ փոխադրելու համար ծառայող, ինչպես և վար-

ձու տրվող ձիերն ու այլ կենդանիները։ Սեփական բնոների փոխառության ծառայող ձիերը չեն կարող հարկման յենթարկվել վորպես փոխաղբական զրադունքի համար ոգտագործվողներ, այլ գրանք պետք ե հարկվեն վորպես բանվոր ձիեր։

դ) սեփական կարիքների, ուղերների և բեռների փոխաղբության համար պահպող խնդնաշարժ կառքերը, մատորային նավակները և հեծանիվները հարկման են յենթարկվում անկախ նրանից՝ ոգտագործվում են գրանք, թե՝ վոչ։

յե) նավերը և մակույկները, վորոնք տերերի կողմից ոգտագործվում են փոխաղբական զրադունքի, այսինքն՝ ուղերներ և բեռներ փոխաղբելու համար։

Հարկից ազատվում են։

ա) Կարմիր բանակում, Պետքաղվարչության և Միլիցիայի որդաններում յեղած անձանց ընտանիքներին պատկանող ձիերը, յեթե յուրաքանչյուր ընտանիք ունի վոչ ամել մեկ ձիուց և յեթե այդպիսին սպասարկում և բացառապես տնային տնտեսության։

բ) Հրդեհաշեջ խմբին պատկանող ձիերն ու խնդնաշարժ կառքերը։

դ) Հողժողկոմատի անմիջական հովանավորման տակ յեղած աղնվացեղ ձիերը։

դ) Առմաղացարի տարիքին չհասած (4 տարեկ.) և վորպես բանվոր ու հեծնելու ձիեր չոգտագործվողները։

յե) Գինվորական հիմնարկություններին, համաձայն հիմնարկության շատուների և ցուցակների, պատկանող ձիյերը, ինքնաշարժ կառքերն ու հեծանիվները։

զ) փոստային հաստատությունների փոխաղբական միջոցները, վորոնք չեն ծառայում ուղերների փոխաղբման։

տ) անտառապահներին և նրանց ողնականներին պատկանող ձիերը, յուրաքանչյուրին մեկ ձիուց վոչ ամել։

Ով ե հանդիսանում հարկատու։

Հարկատուն հանդիսանում և փոխաղբական միջոցների փառական ոգտագործողը կամ տերը՝ ով ել ուղում և լինի։ Փաստական ողնության մասին պատկանը կամ տերը հանդիսանում են այն անձիք և հիմնարկությունները, վորոնց ոգտագործման տակ։ Կամ սեփականության իրավունքով գտնվում են տվյալ փոխաղբական միջոցները։

Հարկատուները յենթարկվում են հարկի վոչ թե ըստ իրենց չշատական բնակավայրի, այլ այնտեղ, ուր փաստորեն ոգտագործում են փոխաղբական միջոցները։

Հարկը հաշվելը և գանձման տեխնիկան։

Փոխաղբական միջոցների կողարները սահմանում են տեղական խորհուրդները համապատասխան վորոշմամբ՝ որենքով նախատեսված կողարների սահմաններում (տես համելված)։

Հարկը հաշվվում է՝ մեխանիկական շարժիչների նկատմամբ՝ ըստ գրանց ձիու ուժի, նախակների, մակույկների և հեծանիվների նկատմամբ՝ ըստ գրանց քանակի, իսկ մյուս փոխաղբական միջոցների նկատմամբ՝ ըստ անասունների թվի։

Հարկային տարիա ընթացքում հարկման որյեկտը մի անձից մյուսին փոխանցվելու դեպքում, յերկրորդ անգամ հարկ չի գանձվում, այլ, ինչպես նոր, նույնպես և հին տիրոջ հայտարարության համաձայն Փինբաժնը համապատասխան նշանակում և անում հարկատայանում։ Հարկային տարիա ընթացքում որյեկտից ոգտվելու դասարի չի վարող հիմք ծառայել վճարված հարկի մասի վերագարձման։

Հարկատուների ցուցակը կողմվում և գավֆինքառինների կողմից՝ տեղական անտեսության, ալտու-տեսչի և միլիցիայի ունեցած տվյալների հիման վրա։

Հարկատուները տեղական խորհուրդների կողմից սահմանված ժամկետին հարկը մուծում են Փինբաժնի դրամարկղը։ Հարկի մուծման համար տրվում են համապատասխան անդորրադրեր, և քացի դա՝ Փինբաժնի դրամարկղում տրվում են համարանիչներ։

10. ՄԻԱՆՎԱԳ ՏՈՒՐՔԻ

Հարկիման որյեկտները

Միանվագ տուրքին յենթակա յեն՝ վորեե առարկւներ, արտանքներ, մթերքներ, պատահական իրեր վաճառող և վաճառելու համար անտառներ և անային կենդանիներ շուկա բերող անձներ, յեթե վաճառքը կատարվում և առանց արհեստագործական վկայագիր վերցնելու։

Միանվագ տուրքի յենթակա վաճառքի տեսակներին պատկանում են՝ ձեռքի արկղներով, զամբյուղներով, դույլերով և այլն կատարվող մանրավաճառքը, սալլակներով, ոսոյլերով և

կամ տեղում, զոչ թե ձեռքից, այլ գետնից կատարվող վաճառքը, և վերջապես շուկա բերված խոշոր և մանր անասունների վաճառքը:

Այ և ազատվում տուրքից.

Միանվագ տուրքի վճարից ազատվում են իր անային կարիքներին գործադրվող իրեր վաճառող անձինք և իրենց տնտեսության մթերքները վաճառող գյուղացիները:

Գյուղացիական անտեսության մթերքները գնող և վերավաճառող անձինք մշտակետ յենթարկվում են միանվագ տուրքի բնդհանուր հիմունքներով:

Տուրքը հաշվելը և գանձելու տեխնիկան.

Տուրքի կողարը սահմանվում և համապատասխան տեղական խորհուրդների վրոշմամբ՝ որենքով նախատեսնված սահմաններում: Ձեռքի վրա կատարվող վաճառքի բարձրագույն կողարը կազմում և յուրաքանչուր որվա համար՝ Յերեանում—15 կող., Լինինականում—12 կ., այլ քաղաքներում—9 կող. և գյուղական վայրերում—6 կ. իսկ անասունների վաճառքի և փոխարական միջոցների սկզբությամբ կատարվող վաճառքի (Բազմայ) կողար ե՝ Յերեանում—40 կ. Լինինականում—32 կ. այլ քաղաքներում—24 կ. և գյուղական վայրերում—16 կող.

Միանվագ տուրք վճարող անձինք չեն ազատվում արհեստագործական հարկի վերաբերվող ռեգիստրացիան քարտ վերցնելու պարտականություններից և իր ժամանուկին քարտ չվերցնելու համար յենթարկված տուղանքից:

Տուրքը գանձվում և այդ նպատակով նշանակված հասուկ հարկահավաքների միջոցով, վորոնք տուրքի վճարման համար տալիս են հասուկ անդորրագրեր ֆինրաժնում գրանցված գրքույկներից:

Հարկատուն համապատասխան տուրքը վճարելուց հրաժարվելու գեղքում, հարկահավաքին իրավունք և արվում միլիցիայի միջոցով կալանքի տակ առնել նրա ապրանքը, մինչև հասանելիք տուրքի վճարումը:

11. ԱՆԱՍՍԻՆՆԵՐԻ ՀԱՐԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Հարկման որյեկտը.

Բացառապես քաղաքային վայրերում գանձվող անասունների հարկին յենթարկվում են խոշոր յեղջուրավոր անասունները, այն

է՝ 2 տարեկանից բարձր ցուկերը և կովերը, 3 տարեկանից բարձր գոմելներն ու յեղները, և փոխազբության համար ծառայող կենդանիները, այն ե՝ յերեք տարեկանից բարձր եշերն ու ջորիները և 4 տարեկ. բարձր ուղարկը:

Հարկման յենթակա չեն.

Անասունների հարկից ազատվում են՝

ա) Խորհրդային անտեսությունների և բեղմակայանների աղնվացեղ կենդանիները, նույնպես և անասնաբուժամանրեաբանական լարորատորիայի փորձնական կենդանիները:

բ) Կարմիր բանակում և Նախառողում ծառայության մեջ յեղած անձանց ընտանիքներին, ինչպես և զորացրվածներին կամ նրանց ընտանիքի աղամեններին պատկանող անասունները, զոչ ավելյուրաքանչյուր ընտանիքին մեկ դիմից:

գ) Սոցիալական ապահովագրության հիմնարկներին պատկանող անասունները:

դ) Գյուղատնտեսական հարկ վճարող անձանց պատկանող և գյուղհարկման միջոցին հաշվի առնված անասունները և

յե) Մանր յեղջուրավոր անասունները:

Հարկը հաշվելը և գանձման տեխնիկան.

Հարկի կողարները սահմանում են տեղական խորհուրդները՝ որենքով նախատեսվածների սահմաններում: Հարկի չափը չի կարող գերազանցել Յերեան և Լինինական բաղադիներում կիսամյակում 5 ոորթ. և այլ բաղադիներում 4 ո. յուրաքանչյուր խոշոր յեղջուրավոր անասունից: Կիսամյակի ընթացքում հարկման յենթարկան անասունը մի այլ տիրոջ փոխանցվելու գեղքում, վորի համար արդեն հարկ վճարված է, կրկին անդամ հարկման չի յենթարկվում, առկայն անասունի փոխանցման մասին անհրաժեշտ հայտնել համապատասխան Փինրաժնին:

Հարկատունները խոչոր յեղջուրավոր անասուններ ունենալու մասին գործկոմների կողմից սահմանված ժամկետին հայտաբություն են տալիս Փինրաժնին:

Ներկա հայտարարությունները ստուգում են գալֆինրաժնի կողմից՝ տեղական անտեսության ունեցած տվյալների հետ համեմատելու և տեղում ստուգելու հանապարհով: Անձիշտ տեղեկու-

թյուն տալու զեպքեր հայտնաբերվելու միջոցին արձանադրություն է կազմվում՝ հանցավորին տուգանելու համար :

Հարկը մուծվում է Փինքաժին՝ տեղական խորհուրդների կողմից սահմանված ժամկետին :

12. ՀՅՈՒՐԱՆՑԵՐՈՒՄ, ՃԱՇԱՐԱՆԵՐՈՒՄ ՅԵԿ ԱՅԼ ՆՄԱՆ
ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏՐՎՈՂ ՀԱՇԻՎՆԵՐԻ
ՀԱՏՈՒԿ ՀԱՐԿ.

Հարկման ոբյեկտները

Համեմատուկ տուրքը գանձվում է հյուրանոցներում, ճաշարաններում, թէյտաններում և նման ձևնարկութիւններում:

Հարկիման յենթակա հաշվի դումարը ողեաբ ե ավել լինի 5
ռուբլուց :

Տուրքից ազատվում են .

Ազատ են տուրքից Հաճախորդներին աբված բոլոր հաշիվները
յիթե այդպիսիների գումարը կազմում է 5 ու և պակաս :

Հաշվելն ու գանձման տեխնիկան

Տուրքի բարձրապույն կոստան որենքով սահմանված է հաշվի գումարի 20 %, վորի սահմաններում տեղական խորհուրդներն յեւ-նելով տեղական պայմաններից կարող են ավելի ցածր կոստաներ պորոշել:

Տուրքը գանձվում է Ընդհանուր հաշիվը վճարելու հետ միասին։ Տուրքի գումարը նշանակվում է Փինքաժնում զբանցված արժանագրքույթից տվող հաշիվների վրա։ Յեթև տուրքի գումարը գանձված չի հաճախորդից, ապա՝ այլպիսին վճարում է ձևուարկությունը կամ զբանցված պատասխանատու կարգադրիչը։

13. ՀԱՆՐԱՅԻՆ ԶՎԱՐՃԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՐԿ

Հարկման ոբյեկտները .

Հասարակական հանդեսների և դվարձատեղերի հարկը դանձը-
կում ե այն անձանցից, վորոնք հաճախում են քաղաքում կայացած
հանդեսներն ու ներկայացումները, այն է՝ գրամմառիկական թե-
մակրությունները, ոպերային ներկայացումները, համերգները
գուցահանդեսները, կինոները, ժամարշավները և այլն։ Գյուղական

վայրերում այսպիսի հանդեսներ հաճախողներն աղառված են Հարկիդ :

Ովքեր են ազատվում հարկից

Հարկից աղասվում են .

ա) Թանգարանները և աշակերտուների, յերեխանների, կարմիր քանակայինների, հիվանդների, կալանավորների համար դպրոցներում, զբանոցներում, հիվանդանոցներում և կալանատաներում կազմակերպված Հանդեսներն ու ներկայացումները հաճախողական են:

բ) Հատկապես յերեխաների համար կազմակերպված ներկայացումների հաճախորդները :

գ) Ազիտացիոն-ալբումալանդիսուական, քաղ-լուսավորական և գեղարվեստական ցուցադրական նշանակություն ունեցող հանգեսների հաճախորդները:

գ) Գեղարվեստական-կրթական կազմակերպությունների, նույնական և յերաժշտական ու թատրոնական դպրոցների կողմից մոռδա-ցուցազրական և հաշվետվական նպատակով կազմակերպված առանձին հանդեսների հաճախորդները:

յի) Բանվորների և ծառայողների կազմակերպությունների, նույնպես և արհմիությունների կողմից իրենց անդամների և նրանց ընտանիքների համար կազմակերպված փակ ներկայացումների հաճախորդները, ըստ վորում այս արտօնությունները կիրառվում են այն դեպքում, յերբ փակ յերեկույթներին չի թույլատրվում կողմնակի անձանց ներկայությունը. յեթե հայտնաբերվեն մուսաբի վճար տված կողմնակի անձինք, այն դեպքում հարկման կյենթարկվեն հիշված հանդեսների հաճախորդները:

զ) Գիտական բնույթի կրող գասահանությունների ու ցուցահանդեսների և

Ե) Յերկանում գտնվող լուսժողկոմատի պետական թատրոնի հաճախորդները :

Հանդեսների ըստ խմբակների բաժանելու կարգը

Հարկի կոսկարները սահմանվում են տեղական խորհուրդների վորոշումներով՝ որևէնքով նախատեսվածների սահմաններում, բայց հանուհների խմբակների այսինքն՝

ա) Սիմֆոնիկական, դրամատիկական, ռազերային (նույն թը-վում նաև կոմիկական ռազերաներ), բալետային ներկայացումնե-

բից և գեղարվեստական ցուցահանդեմներից՝ տոմսի գնի-5%-ը
- բ) Համերգներից, յերաժշտական ու գեղարվեստական յերեկություններից և ցերեկություններից տոմսի գնի-5%-ը:

գ) Սպորտային մրցումներից, հասարակական լսաղերից, կըրկնեսներից, մեխանիկական թատրոններից և կինոներից՝ տաճողութեա—15%-ը:

դ) Ապերեալաներից, կաբարեներից՝ սեղաներով և առանց սեղանների՝ տամայի գնի—25%-ը:

Սակայն կարող են վրոշ գեղքերում կախածներ առաջանալ հանդեսը կամ ներկայացումն այս կամ այն խմբին կցելու։ Այսպես որինակ, կոմիկական սպերան կցված է այն խմբին, զորի համար առհմանված է մինեմալ կոպար վոր կազմում և 5%, մինչեւ զեղքեր են լինում, յերբ այդ անվան տակ ներկայացումները ոսկերետային բնույթ են կրում, զորոնք պետք է հարկման յենթարկվեն ամենաբարձր կոպարով, այն և 25%։

Այսպիսի դժվարություններ առաջանալու վեպքում՝ հանդեմ
այս կամ այն խմբակին կցելու հարցը վորոշվում և Փինը բաժնում՝
Լուսաժնի հետ միասին, և յեթե անհրաժեշտ է հրավիրվում և նաց
Գեղաշխի տեղյալ անդամը: Ֆինը բաժնի և Լուսաժնի վորոշումը
կարելի յէ բողոքարկել Գործկոմի առաջ, վորի վորոշումը համար-
փում և վերջնական:

ՅԵթէ միւնույն ներկայացումը, զանազան բնույթի համար-
ներ ունենալու հետևանքով կարելի յէ կցել հարկման զանազան
խմբերի, ապա նման դեպքում հարկը դանձվում ե ավելի բարձր
կոպարով:

Հարկը հաշվելը և գանձման տեխնիկան

Հարկն հաշվում ե տոմսի հիմնական գնի վրա % ավելացնելու
միջոցով : Յեթե բացի տոմսի գնից գանձվում ե նաև վերին հա-
գուստներ պահելու վարձ, ապա հարկն հաշվում ե ընդհանուր գու-
մարից : Ներկայացման յուրաքանչյուր հաճախորդ պետք ե ունենա-
ֆինքաժնում գրանցված արմատագրքույկներից արված տոմս : Ա-
ռանց համապատասխան տոմս տալու վորեւե վճար զանձել չ-
թույլատրվում, ինչպես և չի թույլատրվում առանց Փինքաժնի
գիտության վորեւե փոփոխություն մտցնել տոմսի գինն արտա-
հայտող թվերի մէջ :

Հարկի դանձման պարտականությունը դրվագ է Հանդեսի

կամ ներկայացման վարչության վրա, փորը հարկը գանձում և
տոմսերը վաճառելու միջոցին՝ վերջինների արժեքից անբաժան:
Տոմսերի վրա պետք է նշանակված լինի տեղը, տոմսի հիմնական
արժեքը և հարկի գումարը, հոգուտ Կարմիր Խաչի Միության
գանձվող տուրքի գումարը և տոմսի ընդհանուր վաճառման ար-
ժեքը:

Արմատագրքերից կտրված տոմսը համարվում է վաճառված և վարչությունը դրա համար համապատասխան հարկ է մուծում :

14. ՊԼԱԿԱՏՆԵՐԻ, ԱՖԻՇԱՆԵՐԻ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ձևականությանը մուգ քաղաքացին վԱՅՐԵՐՈՒՄ .

የዚህም በይዘገበው

Պակատների, աՓիշաների, հայտարարությունների և ռեկ-
լամբների հարկին յենթակա յեն կարճատես և մշտական ռեկլամները,
այն եւ տպադրված և թե ձեռագիր, նույն թվում նաև՝ լուսավոր-
ված, տեղաշարժվող, ինչպես և փողոցներում բաժանվող, ցուցա-
ված, տեղաշարժվող, ինչպես և պատերին փակցված հայտարարու-
թյունները, պայտաները, աՓիշաները և ցուցանակները:

Կարծատես ունկամբեր համարվում են՝ 15 որից վոչ աղբյուր փակցիող ու բաժանվող պլակատները, աֆիշաները և թուուցիկները:

Մշտական համարվում են 15 որից ավել ցուցադրվող կտակարարության եռոր, ցուցանակները և նկարները:

Հայտարարությունների առուրքը դանձվում և առեւրական
Հայտարարությունների առուրքը դանձվում և առեւրական
բնույթ կրող, այսինքն, առեւրի, արդյունաբերության կամ այ-
դրամական գործարքների հետ կապված Հայտարարություններից
վորոնք տալադրված են պարբերական և վոչ-պարբերական հրա-
մարակությունների՝ թերթերի, ամսագրերի, գրքերի, տեղեկա-
տունների որագությունների մեջ:

Վ որոնիք են ազատվում հարկից

այս շաբաթին աղասիվում են

ա) Հիշված հարցով աւ բ) Կենտրոնական և տեղական մարմինների հայտարարությունները։ Այսուել մտնում են պարտադիր վորոշումները, գեկի բանները և կառավարման վերաբերյալ հայտարարությունները։

բ) Ընդհանուր ոգտագործման համար կախված պարբերականության վեցականությանը:

գ) Զրի դասախոսություններ, ժողովներ և ներկայացումներ կազմակերպելու մասին աֆիշաները և հայտարարությունները:

դ) Ադիտացիոն բնույթի պլակատները, հայտարարությունները և աֆիշաները:

յԵ) Աշխատանքի պահանջի և առաջարկի մասին մամուլում լույս տեսած հայտարարությունները: Այս վերջինը չի վերաբերում արհեստավորներին, տնայնադորձներին և ազատ զբաղմունքի տեր անձանց, այն է՝ բժիշկներ, փաստաբաններ և այլն:

զ) Հիմնարկությունների պարտավորեցուցիչ բնույթի կրող հայտարարությունները, այն է՝ հարկերի գանձման մասին, ապահովագրության մասին, պետական փոխառության մասին և այլն:

ե) Ազատվում են նաև չենքի ներսից կամ ճակատից կախված և հիմնարկությանը ուղղված անող ցուցանակներն ու մակագիրները:

Հարկի հաշվումը և գանձման տեխնիկան.

Հարկի կողարները սահմանում են տեղական խորհուրդները՝ որենքով նախատեսվածի սահմաններում (տես հավելված):

Միևնույն հանդեսի կամ ներկայացման մասին յեղած զանազան չափի կարձատե աֆիշաներից հարկը գանձվում և աֆիշայի միջին չափից:

Զանազան տեսակի ուղղամներ բաց թողնող բոլոր ձեռնարկությունները պարտավոր են ցուցակադրվել Փինբաժնում, և վոչ մի ուղղամ չի կարող վակցվել առանց Փինբաժնում դրանցվելու և համապատասխան հարկը մուծելու:

Հարկը մուծվում և նախքան ուղղամը փակցնելը կամ տարածելը:

Հայտարարությունների հարկը գանձում և հրատարակչությունը՝ հայտարարության վճարը ստանալու հետ միասին: Գանձման համար համապատասխան անդորրագիր և արվում Փինբաժնում գրանցված արմատադրքություններից:

15. ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՀԱՐԿ

Հարկման ոբյեկտները.

Աճուրդային վաճառքի հարկին յենթակա յեն քաղաքային վայրերում աճուրդի միջոցով գույքերի բոլոր տեսակի հրատարակային վաճառքները: Հարկը գանձվում է թե մասնավոր և թե պետական հիմնարկություններից ու ձեռնարկություններից: Ա-

ռուրդային վաճառքները հարկման յեն յենթարկվում անկախ այն հանգամանքից, թե վորտեղ և կատարվում վաճառքը—աճուրդի համար կանխորոշված հատուկ չենքերում, թե պահեստներում, Հիմնարկություններում կամ խանութներում: Հարկումը տարածվում և պետական հիմնարկություններին կամ մասնավոր անձանց պատկանող բոլոր անսակի գույքերի, ինչպես շարժական (ապրանքներ, տնային իրեր), նույնպես և անշարժ գույքերի (չենքեր և այլն) վրա:

Հարկը գանձվում և անդամ այն դեպքում, յերբ վաճառքը կատարվում և որենքի կամ կանոնադրության պահանջի հետևանքով, որինակ՝ անտեր գույքերի վաճառքը, յերկաթուղուց չպահանջվող ապրանքների կամ բեռների և զանազան հիմնարկություններում գրավ գրված ապրանքների վաճառքը և այլն:

Գանձման կարգը.

Հարկի չափը սահմանվում և տեղական խորհուրդների համապատասխան վորոշմանը, բայց վոչ ավել վաճառքից ստացված գումարի 5%-ից:

Աճուրդով կատարված վաճառքի հարկը, ինչպես ցույց և տարիս այս տնօւնը, դա վաճառքի, այլ վոչ թե գնման հարկ և, ուստի և դա պետք և զանձվի վաճառողից՝ աճուրդից ստացված գումարից համապատասխան տոկոս գուրս գալու միջոցով:

Աճուրդի կազմակերպող անձինք պարտավոր են աճուրդի կատարման վայրի մասին յերեք որ առաջ հայտնել Փինբաժին, ցույց տալով աճուրդային վաճառքի պատասխանատու կազմակերպչի անուն-ազգանունը և հասցեն:

Բոլոր հրապարակային վաճառքների միջոցին տարվում է յերկու որինակից վաճառման թերթ, ուր ցուցակագրվում ե աճուրդուղ վաճառքի յենթակա բոլոր գույքը: Խսկ աճուրդային վաճառքի մշտական չենքերում, բացի գրանից տարվում ե նաև Փինբաժնում գրանցված աճուրդային վաճառքի հատուկ արձանագրությունների գիրք:

Վաճառվող իրերը գնել ցանկացողներ չլինելու գեղքում, այդ մասին համապատասխան հիշատակվում և արվում վաճառքի թերթում:

Աճուրդներում պետք և ներկա լինի Փինբաժնի ներկայացուցիչը, սակայն վորի բացակայությունը չի կարող պատճառ լինել վաճառքը գաղարեցնելուն:

Տեղական խորհուրդների կողմից սահմանված ժամկետին հարկը Փինքաժնի գրամարկղը մուծելու և հարկի ճշության համար պատասխանառու յէ աճուրդ կազմակերպողը։ Հարկի վճարման մասին Փինքաժնի գրամարկղը տալիս է սահմանված ձեւի անտորբետի, վորը կցվում է վաճառքի թերթին վորակո արդարեցցիչ փաստաթուղթ։

16. ՅՈՒՅԱԳՐՄԱՆ ՏՈՒՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Ցուցադրման տուրքը գանձվում է միլիցիական որդանների վողաց քաղաքային վայրերում՝ անձնավորությունը ապացուցող յուրաքանչյուր փաստաթղթի գրանցումից։

Ով և ազատվում հարկումից։

Ցուցադրման տուրքից ազատվում էն։

ա) Կարմիր բանակում և Նավատօրմում յեղած անձինք և նրանց ընտանիքների անդամները։

բ) Կարմիր բանակից և Նավատօրմից զորացրվածներն ու անժամկետ արձակուրդ զնացածները։ Նրանց ինամքի տակ յեղած ընտանիքի անդամները։ Այս արտօնությունները կիրառվում են զորացրման կամ անժամկետ արձակուրդ զնալու որից սկսած մեկ տարի ժամանակամիջոցում։

Հարկի կոպարները և գանձման կարգը։

Հարկի կոպարները սահմանվում են տեղական խորհուրդների ժամանակամամբ, ըստ վորում չպետք և ավել լինի յուրաքանչյուր փաստաթղթի գրանցման համար՝ բանվորներից և ծառայողներից 20 կազ. արհեստավորներից և տնայնագործներից՝ 40 կ. իսկ այլ անձանցից՝ 2 ոռուր.։ Տուրքը գանձվում է դրանցման միջոցին՝ փաստաթղթի վրա հատուկ գրամանիներ փակցնելու և շիշելու միջոցով։ Հիշված գրամանիները միլիցիան կանխավճարով ստանում ե Փինքաժնից։ Գանձված գումարը տեղական խորհուրդների կողմից սահմանված ժամկետին մուծվում են Փինքաժնի գրամարկղը։

17. ՀԱՍԹԻԿ ՏՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՅՔ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑԻՑ.

Գյուղական կատարածու լինելու իրավունք չունեցող անձանց հասուկ տուրքին յևնթարկում են ըստ սահմանադրության ընտ-

րական իրավունքից դրկված անձինք, վորոնք չեն կարող ընտրվել՝ դյուղական կատարածուների պաշտոն տանելու համար։

Այդպիսի անձանց թվին են պատկանում՝ մասնավոր առևտրով վարդպանները, տերաբերներն ու վարդապետները և այլ կրօնական գավանանքներին ծառայողները, վոստիկանության, ժանդարմերիայի և պահուորական բաժնի նախկին ծառայողները և զատարանի վորոշմամբ իրավադուրկները։

Կոպարը և գանձման տեխնիկան։

Տուրքի կոպարը վորոշվում է կենտգործկոմի կողմից հաստատված կոպարների սահմաններում, այն ե՝ 8-ից մինչև 2 ոռուրի։

Հարկատունների ցուցակները կազմում ե համապատասխան Գավառակային Գործկոմը՝ վերընտրությունների վերաբերյալ այլայնների հիման վրա, և տէղական պայմանների հարմար ձևով ծանուցվում է հարկատուններին։ Հարկատունները սահմանված տուրքը վճարում են տարեկան մեկ անգամ՝ զավառային գործկոմների վորոշած ժամկետին։

18. ՅՈՒՐԻ ԲՈՒԺԴՎԱՅՐԵՐԸ ՅԵԿԱՂ ԱՆՁԱՆՑԻՑ.

Բուժավայրեր յեկողների տուրքը գանձվում է բուժման ամբողջ սեղոնի ընթացքում հիշված վայրերն յեկող բոլոր անձանցից։

Ովքեր են տուրքից ազատվում։

Այս տուրքից ազատվում են։

ա) Սոցիալական ապահովագրության մարմինների կողմից բուժավայրերում գտնված սահմանորիումներն ուղարկված բոլոր բանվորները, ծառայողներն ու գյուղացիները։

բ) Սահմանորիում ուղարկված պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների, ինչպես և կուսակցական և արհեստական կազմակերպությունների բոլոր բանվորներն ու ծառայողները՝ հիշված մարմինների դնած տեղերը գրավելու համար։

շ) Սահմանորիումների բանվորներն ու ծառայողները։

դ) Սոցիալական ապահովագրված տակ յեղած հաշմանդամները։

յ) 14 տարիքի չհասած յերեխաները։

դ) 10 որից վոչ ավել պաշտոնական գործով յեկածները։

է) 5 որից վոչ ավել անձնական գործով յեկածները։

Տուրքի կողարները և գանձման կարգը .

Տուրքի կողարները սահմանում են տեղական խորհուրդները համապատասխան վորոշամբ և այլպիսին չոփաք և գերազանցի բանվորների և ծառայողների, ինչպէս և նրանց ընտանիքների անդամներից 1 ու 50 կ. և այլ քաղաքացիներից՝ 5 ոուր. սեղոնի Համար :

Տուրքը դանձում են միլիոնիական մաքմինները՝ անձնական վկայագիր, ծառայող վաստավլդիլը գրանցման և զրանց տուրքը զանձելու միջոցին։ Տուրքի վճարման համար միլիոնիական մաքմինները համապատասխան անտորագրեր են տալիս Փինըաժնում գրանցված արժատադրութիւնը, իսկ վաստավլդիլի հետեւմ նշանակում են կատարում, տուրքի մուծման մասին։

Այս տուրքը Հայաստանում անց և կացվում միայն Դիլիջանում, վորը համապատասխան վորոշամբ լուժավայր և ճանաչված։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿ. ՅԵՎ ՏՈՒՐՔ. ԱՌԱՎԵԼԱԳ. ԿՈՊԱՐՆԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ
ԱՆՈՒՆՆԵՐԸ

Առավելագույն կոպարները

Ցերեան- լենիական	Այլ քաղաքներ		
Բ.	Կ.	Բ.	Կ.

Ա. ՀԱՅԻ ՓՈԽԱԴՐՄԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻՑ

ա) Սեփական կարիքների համար ողտագործվող ամեն մի հեծնելու (այցելու) ձիուց կիսամյակում։

25 — 15 —

Դանորուրյուն. — Բանվոր ձիերից զանձվելիք հարկի կողարը չը-
պետք և գերազանցի հեծնելու ձիերի համար սահմանված կո-
պարի 25%-ից։

Դանորուրյուն 2. — Պետական և տեղական բյուջեյով պահպող պետական հիմնարկություններին պատկանող սեփական կարիքների համար ուղարկություղ և հեծնելու ձիերից հարկը զանձվում և ուրիշ հարկացանուների համար սահմանված կողարի կիսի չա-
փով։

բ) Մարդառար ինքնաշարժ մեքենայի կամ մասորային նավի ամեն մի ուժից կիսամյակում

5 — 3 —

գ) Մոտոցիկլետ կամ բեռնատար մեքենայի ամեն մի ուժից կիսամյակում

3 — 3 —

դ) Ամեն մի հեծանիվից կիսամյակում

2 — 2 —

է) Ամեն մի ձիուց կամ այլ անասունից, վոր գործ և ածվում վոխաղբական պաղմունքի համար՝ կիսամյակում

12 50 10 —

ը) Ամեն մի մարդառար նավից կամ մակույկից՝ սեղոնում

— — 3 —

ը) Ամեն մի բեռնատար նավից՝ սեղոնում

— — 10 —

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՅԵԼ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՑԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Առավելագույն կո- պարհերը			
	Յերեան- Լեռնական	ԱՌ քաղաքներ	ԱՌ	ԱՌ
	Ա.	Ա.	Ա.	Ա.
Բ. ԱՆՍՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿ				
ա) Ամեն մի խոչոր յեղջուրավոր անա- սունից՝ մեկ տարում	5	—	4	
Գ. ԱֆիշԱՆԵՐԻ, ՊԼԱԿԱՏՆԵՐԻ ՑԵՎ ԹԵԿԱՄԵՐՆԵՐԻ ՀԱՐԿ				
ա) Կարճ ժամանակով՝ փակցբած սլա- կամների, աֆիշաների և ուկամնե- րի ամեն մի 20 քառ. սանտիմետրի համար, յուրաքանչյուր լրիվ և վոչ լրիվ 500 որինակից	2	—	2	
բ) Մշտական ուկամների, վորոնց թը- գում նաև լուսառելլամի յուրաքան- չյուր քառակուսի մետրի համար մեկ ամսում	1	—	1	
Հ. ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՐՔ ՔԱՂ. ՎԱՅՐԵՐՈՒՄ				
Անձնալորության յուրաքանչյուր վեայա- կանից				
ա) Բանվորներից և ծառայողներից	20	—	20	
բ) Արհեստալորներից	40	—	40	
գ) Այլ քաղաքացիներից	2	—	2	
Հ. ՏՈՒՐՔ ԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԸ ՑԵԿԱԴ ԱՆՁԵՐԻՑ				
ա) Բանվորներից, ծառայողներից և նը- րանց ընտանիքի անդամներից	1	50		
բ) Այլ քաղաքացիներից	5	—		
Ծանոթություն.—Երեք և ավելի ան- դամներից կազմված ընտանիքներից գանձվելիք հարկի կոպարը չպետք է գերազանցի այլ գանձվելիք հար- կի 50%-ից :				

ՎՐԱՇՈՒ

ՀԱԽԱ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՐԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱ-
ԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐ ՅԵՎ ՏՈՒՐ-
ՔԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

(1928 թ. դեկտեմբերի 19-ին)

ԱՍՖԽՀ Հ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի կողմէից 1926 թ. սպասառությունը 9-ին հաստատված «Տեղական Փինանսների կանոնադրության» (ԱՍՖԽՀ Որդիքան, 1926 թ. № 8 հոդ. 697) 57-րդ հոդվածի հիման վրա Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիտարների խորհրդությունը վորոշում են.

1. Տեղական միջոցներն ուժեղացնելու նպատակով թույլ տալ տեղական խորհուրդներին բացի տեղական Փինանսների՝ 1926 թ. ոգոստոսի 9-ին հաստավված կանոնադրության 27-րդ հոդվածով նախատեսնված տեղական հարկերից և տուրքերից սահմաննել ու գանձել հետեւալ տեղական հարկերն ու տաւրքերը.

ա) վոլխաղբական միջոցների հարկ ,
բ) միանվագ տուրք ,
տ) անսասունների հարկ ,
դ) հանրային զվարձալիքների հարկ ,
յէ) պլակատների , աֆիշների , ռեկլամաների և հայտարարությունների հարկ քաղաքային վայրերում ,
զ) աճուրդով վաճառվող գույքերի հարկ ,
ը) ցուցակադրման տուրք քաղաքային վայրերում ,
թ) տուրք լուժավայրեր յեկողներից ,
ժ) հյուրանոցներում , ճաշարաններում և նման ձեռնարկություններում արվող հաշիվների հասուլ տուրք ,
ի) հատուկ տուրք գյուղական կատարածու լինելու իրավունքից պրեգած անձերից :

2. Փոխադրական միջոցների հարկի (1-ին հոգ. կ. «ա») յիշ-
թակա լեն՝

ա) սեփհական կարիքների համար ոգտագործվող հեծնելու, կառքի (եցեզներ) և բանվոր ձերը, վորոնք պատկանում են ինչպես մասնավոր անձանց, նույնպես և ընկերություններին, ձեռնարկություններին, պաշտոնական անձանց և պետական հիմնարկություններին.

բ) ինքնաշարժ կառչելը, մոտորային նավերը և հեծանիվները:

գ) ձիերը և այլ անսառունները, վորոնք ողտադործվում են փոխադրական զբաղմունքի համար (նշեցնայի պրոմայլ),

դ) նավակներն ու մակույշները, վորոնք ողտադործվում են փոխադրական զբաղմունքի համար (ուղարկած նշեցնայի պրոմայլ):

Ծանոթություն.—Փոխադրական միջոցների յեկամուտը գյուղական միասնարկի յենթարկվող յեկամուտի մեջ հաշվի առնելու գեղքում փոխադրական միջոցները տեղական հարկի չեն յենթարկվում:

3. Նախորդ հոգվածում ցույց տված հարկի յենթակա որյեկտներից աղասիվում են՝ այն ձիերը, վորոնք պատկանում են կարմիր Բանակում և նավատօրմում ծառայության մեջ գտնված։ Միլիցիայի և Պետքադպրչության, նրա տեղական մարմիններում շարքային պաշտոն վարող անձանց ընտանիքներին, վոչ ավել քան մեկ ձի յուրաքանչյուր ընտանիքին,

բ) Հոգեհաշեջ խմբերին պատկանող ձիերը և ինքնաշարժ կառքերը,

գ) աղնվացեղ ձիերը, վորոնք գտնվում են Հողադործության Ժողովրդական Կոմիսարիատի որդանների անմիջական տրամադրության տակ,

դ) նորմալ բանվորական հասակի, (4 տարեկան) չհասած ձիերը, վորոնք տերերի կողմից չեն ողտադործվում վորակես հեծելու կամ բանվոր ձիեր,

յե) զինվորական հմտնարկներին կամ զորամասերին պատկանող ձիերը, ինքնաշարժ կառքերը և հեծանիվները, վորոնք տրամադրված են նրանց շտամերով և տարեհերով.

զ) փոստային փոխադրության համար գործադրվող՝ պետական կայարանների փոխադրական միջոցները.

Ծանոթություն.—Յեթե պետական փոստային կայանները բացի փոստը փոխադրելուց առանձին վարձատրությամբ ճանապարհորդներ փոխադրելու համար հատուկ միջոցներ և ձիեր են պահում, ապա այլ փոխադրական միջոցները յենթարկվում են տեղական հարկի։

ը) Կարմիր բանակայիններին և կարմիր Բանակի հրամանադրական կազմին պատկանող հեծանիվները.

թ) Խ. Ս. Հ. Մ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից հաստատված ոտարյերկրյա գիվանադրտական ներկայացուցիչներին և գեսականությունների ու պատգամավորությունների

կազմի մեջ մտնող այլ անձանց, ինչպես նաև գլխավոր հյուպատոսներին, փոխադրությունների գործակալներին պատկանող ավտոմոբիլները և փոխադրական այլ միջոցները, յեթե միայն համապատասխան պետություններում նույնպիսի արտոնություններ տրվում են նաև խորհրդային ներկայացուցիչներին.

ժ) ոտարյերկրյա ավտոմոբիլային ընկերությունների անդամ և միջազգային ավտոմոբիլային կոնվենցիայի (Խ. Ս. Հ. Մ. Որ. և Կարդ. Ժող. 1926 թ. հոդ. 153) հիման վրա միջն 1929 թ. հոկտեմբերի 1-ը Հ. Ս. Խ. Հեկած ոտարյան պատկանող ավտոմոբիլները և փոխադրական այլ միջոցները, յեթե միայն համապատասխան պետություններում նույնպիսի արտոնություններ տրվում են խորհրդային քաղաքացիներին.

ի Հոգագործության ժողովրդական Կմիսարիատի անտառաշպետություններում ուղարկումնավարող անտառապահներին, անտառապետներին և նրանց ողնականներին պատկանող ձիերը, վոչ ավելի քան յուրաքանչյուրին մի ձի։

4. Միանվագ տուրքը (1-ին հոդ. «Բ» կետ) զանձվում է շուկաներում։ Հրազդականներում և այլ տեղերում առանց ցուցակագրության վկայականի առեւտուր անող անձերից։

ա) ձեռքի արկղներով, զամբյուղներով և այլ ամանով շրթեկ առեւտուր անող անձերից։

բ) սայլերով, Փուրզուններով, առշկաններով շրջիկ առեւտուր անող անձերից։

գ) շուկայում անտառաններ վաճառող անձերից։

5. Միանվագ տուրքի չափը մեկ որփա համար չպետք ե գերազանցի։

ա) ձեռքի շրջիկ առեւտրի համար—Յերեան 15 կ., Լենինական 12 կ., այլ քաղաքներում—9 կ., գյուղական վայրերում—6 կ.

բ) սայլերով, Փուրզուններով և այլ շրջիկ զետեղարաններից առեւտուր անձերը համար—Յերեան 40 կոպ., Լենինական 32 կ., այլ քաղաքներում 24 կ., գյուղական վայրերում—16 կ.

գ) շուկայում անտառաններ վաճառողների համար—Յերեան 40 կ., Լենինական 32 կ., այլ քաղաքներում—24 կ., գյուղական վայրերում—16 կ. (Ա. Բ. կարդի անձնական զբաղմունքի արհեստագործական հարկի կայուն դրույքների 1%):

6. 4-րդ հոգվածում մատնանշված հարկի յենթակա որյեկտերից աղասիվում են՝

ա) այն անձինք, վորոնք վաճառում են իրենց տան գործածված իրերը.

բ) այն գյուղացիները, վորոնք վաճառում են իրենց սեփական տնտեսությունից ստացված պարենալորման մթերքները, վորոնց ցուցակը վորոշում և ֆինժողկոմատը:

7. Քաղաքային վայրերում անասուններից զանձվելիք հարկի (Հոդ. 1-ին կետ «գ») յենթակա յեն փոխարական միջների հարկից ազատ բոլոր խոշոր անասունները:

8. 7-րդ հոդվածում ցույց տրված հարկերի որյեկտից ազատվում են՝

ա) խորհրդային տնտեսությունների և բեղմակայանների աղնվացեղ անասունները.

բ) անասնաբուժական-բժիշողիտական լաբորատորիաներում և նման հիմնարկություններում փորձերի համար սպահվող կենդանիները.

գ) Կարմիր Բանակում և նազատորմիզում ծառայողների ընտանիքներին պատկանող անասունները, յեթև մի գլխից ավելի չեն.

դ) Կարմիր Բանակից և նազատորմից զորացրվածներին և անորոշ ժամանակով ծառայությունից արձակվածներին կամ նրանց խնամքի աակ գանվազ ընտանիքի անդամներին պատկանող մի գլուխ անասունը զորացրումից կամ արձակուրդից հետո մի տարվա ընթացքում.

յԵ) գյուղատնտեսական հարկ վճարողներին պատկանող և այդ չարկը սահմանելիս հաշվի առնված անասունները.

զ) Սոցիալական ապահովագրության հիմնարկներին պատկանող անասունները.

ը) յերկու տարեկանից վտքը ցուլերը, կովերը և յերինչները և 3 տարեկանից փոքր յեղները, զոմեչները, ջորիները և եշերը:

9. Հանրային զվարճատեղերի հարկը (Հոդ. 1-ին կետ «գ») վանձում և բոլոր հասարակական զվարճատեղերը հաճախող անձերից, զվարովի տամսերի զնի վրա տոկոսային հավելում անելու միջոցով՝ այս վարոշման 10-րդ հոդվածով նախատեսմած չափով:

Շանոքություն-Յերեան քաղաքում հիշյալ հարկը գանձում և տամսերին զրոշմանիշներ փակցնելու միջոցով:

10. Հարկ սահմանելու տեսակետից զվարճատեղերն ըստ զվարճալիքի տեսակի բաժանվում են խմբերի. վորոնց համար նախատեսմած են հարկի հետեւալ առավելագույն կոպարները:

ա) սիմֆոնիկ կատարումներից, դրամատիկական ոպերա-յից, (սրանց թվում նաև կոմիկական ոպերայից), բալետային ներկայացումներից, գեղարվեստական և այլ ցուցահանդեսներից—վոչ ավել քան տոմսի արժեքի 5%-ը.

բ) համերգներից, գրական և յերաժշտական յերեկույթներից ու ցերեկույթներից վոչ ավելի քան տոմսի արժեքի 5%-ը:

շ) սպորտային մրցումներից, հասարակական խողերից, կրկեսներից, մեխանիկական թատրոններից և կինոներից վոչ ավելի քան տոմսի արժեքի 10 %-ը:

դ) թեթև ժամաների սերկայացումներից, (ոպերա կաբարե և այն) սեղաններով և առանց սեղանների վաղքից, ձիարշավներից, պարի յերեկոներից և դիմակահանդեսներից վոչ ավելի քան ուժութեան արժեքի 25 %-ը:

11. 9-րդ հոդվածում ցույց տրված հարկից ազատվում են՝

ա) դպրոցներում, զորանոցներում, հիվանդանոցներում, առաստարաններում և կալանատներում միայն աշակեռության, կարմիր բանակայինների, հիվանդների, խնամարկալ-ների և կալանավորի համար կազմակերպված մուղենների ու հանդես-ներկայացումների հաճախորդները, յեթև աֆշաները չեն փակցրվում և կողմանակի անձանց տոմսեր չեն վաճառում.

բ) ագիտալրով, քաղլուավարական և գեղարվեստական նշանակություն ունեցող առանձին հանդեսների հաճախորդները.

շ) բեմական և յերաժշտական դպրոցների կողմից կազմակերպված այն հանդեսների, վորոնք ունեն փորձա-ցուցադրական և հաշվետու նպատակ.

դ) բանվորների ու ծառայողների և արհմիութենական կազմակերպությունների կողմից միայն իրենց անդամների և նրանց ընտանիքների անդամների համար կազմակերպված փակ յերեկույթների հաճախորդները:

յԵ) դիտական բնույթի կրող դասախոսությունների ու ցուցահանդեսների հաճախորդները.

զ) Լուսադոկոմատի տրամադրության տակ գտնվող Յերեկանի ակադեմիական թատրոնը:

12. Պլակատների, աֆիշաների, ռեկլամների և հայտարարությունների (Հոդ. 1 կետ «ե») հարկը քաղաքային վայրերում գանձում են՝

ա) կարճ ժամանակվա պլակատներից և աֆիշաներից, վոր թաժանում կամ ըջեցնում են փողոցներում, ցուցադրվում են կամ

փակցվում հատւկ նշանակված տեղերում, ցուցավայրերում և այլն 15 որից վոչ ավելի ժամանակով.

բ) մշտական ռեկլամներից, սրանց թվում նաև լուսառեկլամներից, վորոնք փակցվում են կամ ցուցադրվում են 15 որից ավելի ժամանակով.

գ) հայտարարություններից, վորոնք զետեղվում են ամեն տեսակ տպագիր հրատարակություններում (լրագրերում, հանդեսներում, գրքերում և այլն):

13. Հայտարարություններից գանձվելիք հարկի չափը չպետք է գերազանցի հայտարարության արժեքի 10%-ից:

14. 12-րդ Հոդվածում ցույց տրված հարկից ազատվում են՝
ա) կենտրոնական և տեղական իշխանության կարգադրությունները և վորոշումները.

բ) ընդհանուր գործածության համար կախվող ուղարկերական հրատարակությունները.

գ) այն ներկայացումների դասախոսությունների, համերգների և այլ ձեռնարկումների աֆիշաներն ու հայտարարությունները, վորոնց արդյունքը հատկացվում է տարրերային աղետներից տուժածների սպաֆն.

դ) ադիտացիոն բնույթ կրող պլակատները և աֆիշաները.

յե) ձեր դասախոսությունների և ժողովների վերաբերյալ աֆիշաներն ու հայտարարությունները.

զ) այն հայտարարությունները, վորոնք չեն կրում առևտուրական բնույթ և չեն հետապնդում նյութական շահ ձեռք բերելու նպատակ.

ը) աշխատանքի առաջարկի և պահանջի վերաբերյալ հայտարարությունները.

թ) ձեր հայտարարությունները:

15. Քաղաքային վայրերում աճուրդով վաճառվող գույքերից հարկը գանձվում է՝ (Հոդ. 1 կետ «զ») բոլոր աճուրդասրահներում և այլ չենքելում աճուրդով վաճառվող գույքերից նաև հրատարական աճուրդով վաճառող գույքերից ինչպես այն դեպքում, յերբ աճուրդը կատարվում է կամավոր, նույնպես և այն դեպքում, յերբ կատարվում է վորոշ որենքների պահանջով:

16. Հարկի չափը չպետք է գերազանցի աճուրդից գոյացած դումարի 5%-ից:

17. Ցուցակաբարական տուրքը (Հոդ. 1 կետ «ը») գանձվում է

ժիղոցիայի մարմինների կողմից հաստատվող, անձնավորության լուրաքանչյուր վկայականից:

18. Նախորդ 17-րդ Հոդվածում ցույց տված հարկից ազատվում են՝

ա) Կարմիր Բանակում և նավատարմիզում ծառայողները և նրանց ընտանիքների անդամները.

բ) Կարմիր Բանակից և նավատարմիզից զորացրվածները և նրանց ընտանիքի անդամները զորացրումից հետո մեկ տարվա ընթացքում:

19. Բուժվայրեր յեկողներից (Հոդ. 1 կետ «թ») տուրքը գանձվում է բուժման սեղոնում տվյալ վայրը յեկող բոլոր անձնափորություններից:

Ծանոթություն. —Վերոհիշյալ տուրքը հատկացվում է բացառապես տվյալ վայրի կուրորտա-սանիտարական և բարեկարգման կարիքների համար:

20. 19-րդ Հոդվածում ցույց տրված հարկից ազատվում էն՝

ա) Ազգահովագրական դանձարկղի կողմից կամ պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների, ինչպես և կուսակցական ու արհեստակցական կաղմակերպությունների կողմից կուրորտային սանատորիա ուղարկված բոլոր բանվորները, դյուպացիները և ծառայողները.

բ) սանատորիաների բանվորներն ու ծառայողները.

գ) Հաշմանդամները, վորոնք սոցիալական ապահովագրության խնամք են վայելում և այդ խնամքն ստանում են սոցիալական ապահովագրության կարգով.

դ) տասնեւորս տարին չլրացած յերեխաները.

յե) վոչ ավելի քան 5 որով անձնական գործով յեկածները.

զ) տաս որից վոչ ավելի ժամանակով գործուղղվածները.

21. Հյուրանոցներում, ճաշարաններում և նման ձեռնարկություններում տրվող հաշիվներից հատուկ տուրքը (Հոդ. 1 կետ «ժ») գանձվում է այն ձեռնարկությունների հաճախորդներից, վորոնք առևտուրական ձեռնարկությունների ցուցակի 4-րդ կարգից ցած չեն դասված:

22. 21-րդ Հոդվածով նախատեսնված տուրքը գանձվում է Հաշվի գումարի համեմատ Հաշվի գումարի 20%-ից վոչ ավելի, այն անձնավորությունները, վորոնց ներկայացված Հաշվը 5 ուղելուց չի գերազանցում, ազատվում են հարկից:

23. Հատուկ տուրքը դյուղացիական կատարածու լինելու իրավունքից զրկվածներից (հոդ. 1 կետ «ի») դանձվում ե այն բոլոր ձայնագուրք քաղաքացիներից, վորոնք սահմանադրության համաձայն չեն կարող ընտրվել դյուղական կատարածու:

24. 23-րդ հոդվածում նախատեսված հատուկ տուրքի չափը չպետք է լինի 2 ոռոբլուց պակաս և գերազանցի 8 ոռոբլուց :

25. Հոդ. 1-ի «ա» «գ» «ե» «ը» «թ» կետերով նախատեսված կոպարները չպետք գերազանցեն նույն վորոշման կցված տեղական հարկերի առավելադույն կոպարներից :

26. Հոդ. 1-ինում հիշատակված տեղական հարկերի գանձման
կարգը և կանոնները սահմանվում են Հ. Ս. Խ. Հ. Փինժողկոմատի
կողմէից :

27. Առևյն վորոշումն ուժի մեջ ե մտնում 1928 թ. Հոկտեմբ-
բերի 1-ից :

28. Այս վորոշմամբ կերպացվում է Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խարհրդի կողմից հրատարակված բոլոր վորոշումները և կարգադրությունները տեղական հարկերի և տուրքերի վերաբերյալ:

կենտրոնական գործադիր Կոմիտեյի Նախագահը Տեղակալ՝
Հ. Ա. ԶԱՑՅԱՆ

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի Նախագահի Տեղակալ՝
Ա. Մինակչյան


Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Քարտուղար
Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՑԵՐԿՎԱՆ .

ՑԱՆԿ

Հառաջաբանի փոխարեն	3
Հարկերի և տուրքերի տեսակները	5
Տեղական հարկերի և տուրքերի սպամանումը	6
Տեղական հարկման առքիվ տեղական մարմնների գործողությունները և կարգը	7
Հարկասուներին ժամկետ և հարկը մաս-մաս վեարելու համար ժամանակ տպու, ինչպես և տեղական հարկերը և տուրքերը զիջելու կարգը	8
Ավելորդ կամ սխալ գանձված գումարների վերադարձման կարգը	9
Տեղական հարկման յենքակա չեն	10
Լուսահարկման կարգը	12
Շեմֆերի հարկ	13
Հարկ բեռներից	16
Հարկ բորսայում կատարվող գործարքներից	18
Հարկ արդյունաբերական այգիներից և բանշարանոցներից	19
Տուրքանտառանյութերից	21
Անասունների և դրանց հում նյութերի անասնա-բուժա-քննության տուրք	21
Բնակարանային տուրք	24
Մենսոն	25
Հարկ փոխադրական միջոցներից	29
Միանվագ տուրք	31
Անասունների հարկ բաղադային վայրերում	32
Հյուրանոցներում, նաշարաններում և այլ նման ձեռնարկություններում արվող հաշիվների հասուլ հարկ	34
Հանրային զվարեալիքների հարկ	34
Պլակատների, ափիշաների, հայտարարությունների և ռեկլամների հարկ բաղադային վայրերում	37
Անուրդով վահանվող գույքների հարկ	38

Յուցագրման տուրք հաղաքային վայրերում	40
Հատուկ տուրք զյուղական կատարածու լինելու իրավունք	
չունեցող անձանցից	40
Տուրք բուժավայրերը յեկող անձանցից	41
Հավելված	43
Վորոշում Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի	
և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի տեղական հար-	
կեր և տուրքեր սահմանելու մասին	45



ՀՀ Ազգային գրադարան



NL0208287

56

APR 25 1969